



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	2
ՊԻՏԻ ԿԵՐՏԵՆՔ ՕԳՈՍՏԱՓՈԱՆ ՆՈՐ ԱՐՇԱԼՈՅՍ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	4
ԹԵՀՐԱՆԱՀԱՅ ԽՄԲԱԳԻՐԸ ՓԱԿԱԳԾԵՐ Է ԲԱՅՈՒՄ	4
Չի կարելի անտեսել էսկալաքայի վտանգը, բայց	4
ԿԻՊՐԱՀԱՅ	6
ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԻՊՐՈՍԻ ՄՕՏ ՀՀ ԴԵՄՊԱՆՈՒՇԻ ՏԻԿ. ԻՆՆԱ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ ՀԵՏ	6
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԿԻՊՐՈՍԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ.....	7
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	8
ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ 50-ԱՄԵԱԿ	8
ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՈՐ ԿԵԱՆՔ ՇԻՆԵՑ.....	8
ՊԱՏՄԱԲԱՆ ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ՀԱՄԱՐ» ԱՆԳԼԵՐԷՆ ՀԱՏՈՐԸ.....	12
ՍՈՒՐԻԱ ԵՒ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆ	15
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ.....	15
ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒ ՓՐԿՈՒԹԻՒՆ.....	15
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀԱՅՐԵՆԱՄԻՐՈՒԹԻՒՆԸ՝	18
ԿՈՉ ԱՐԴԻՆԱԻՏ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ.....	18
ՓԱՇԻՆԵԱՆԻ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒՆ.....	20
ՏԵՍԱԿԷՏ	23
ԱՆՈՐՈՇ ԵՒ ՄՏԱՀՈԳԻՉ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»Ը ԻՆՔՆԻՆ ԻՐԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԻՔ ՉԷ՝	23
- 21 մարտ, 2025, ԱԶԳ շաբաթաբերթ,.....	23
«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ»՝	25
ԲԱՅՑ ՆԱԽ՝ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ	25
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՐԻ ԵՒ ԱՆՈՐ ՏԵՐ ԱԶԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԵԼԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ.....	28
2025-Ը ԴԵՆ 1984-Ը ՉԷ՝	33
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ԱՊԱԿԱՑՈՒՆԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	35
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	37
ՓՈՒՆՋ ՍԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	37
ՊԱՏԷՆ ԿԱԽՈՒԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ԿԸ ՆԵՐՇՆՉԵ՞Ն ՄԵԶ.....	42
ԼՍԵԼՈՒ ԵՒ ԽՕՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	45
ՅԻՍՆԱՄԵԱՅ ԱՆԹԵՂՈՒԱԾ ՅՈՒՇԵՐ	47



ԱՆՇԱՆՕԹՈՒՇԻՆ Ա.....	49
(ԽՈՆՀԱԳՐՈՒԹԻՒՆ).....	49
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	51
ՔԱՌԵԱԿՆԵՐ.....	54

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԻՏԻ ԿԵՐՏԵՆՔ ՕԳՈՍՏԱՓԱՌ ՆՈՐ ԱՐՇԱԼՈՅՍ

110 տարիներ են անցել մեր մեծագոյն արհաւիրքէն, հայոց Յեղասպանութեան եւ Հայրենագրկումի սեւ թուականէն: Թուական՝ երբ մէկ գիշերուան մէջ ձերբակալուեցան եւ անյայտին մեկնեցան մեր շուրջ 500 մտաւորականները՝ ազգի ընտրանին կամ գլուխը: Թուական՝ երբ յանկարծօրէն լռեցին հայոց աշխարհի տաճարներու, եկեղեցիներու զանգերը, երբ ամայացան մեր շէներն ու քաղաքները՝ Սուշէն ու Պիթլիսէն մինչեւ Սասուն ու Հաճըն, Խարբերդ, Աղթամար ու Կարս... եւ չլուսած անունները՝ Ռաս Ուլ Այնի, Տէր Զօրի դարձան դամբարանը մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն...



Մեր առհաւական յիշողութեան մէջ միշտ կ'առկայծին ու պիտի առկայծին պատգամը անոնց, որոնք ինկան. «Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, Թող ողջ աշխարհ հայուն կարդայ նախաստինք»: Մենք ՏԷՐՆ ենք մեր բոլոր մեռելներուն, մենք ՏԷՐՆ ենք այն սուրբ հողերուն, պատմամշակութային կոթողներուն, եկեղեցիներուն, վանքերուն...որոնք լուռ վկաներն են մեր

բազմադարեան այն պանծալի քաղաքակրթութեան, որ ծնունդ առաւ եւ հոյակերտուեցաւ այդ հողերուն վրայ եւ յանկարծօրէն դարձաւ արմատախիլ իր «փոշի ազգ»ին հետ միասին: Ազգը չի կրնար մոռնալ իր պատմական անցեալը, դաւաճանել իր պապերուն յիշատակին, եթէ դեռ արթուն են իր մէջ իր արմատներուն գիտակցութիւնը եւ ազգային ոգին:

Թուրքը ուրացաւ իր Թալէաղներու, Էնվերներու, Պեհաետտին Շաքիրներու եւ անոնց գործակիցներուն մտայնացած ու գործադրած 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը: Փոխեց իր ֆէտր՝ գլխարկով, իր օսմանեան գիրը՝ լատինականով, բայց էութեամբ մնաց նոյն բարբարոսը, ժխտեց հայկական ցեղասպանութեան փաստը, մնաց անպատիժ մինչեւ այսօր: Իսկ աշխարհի տարբեր պետութիւններն ու կառոյցները, թէեւ պաշտօնապէս ճանչցան եւ դատապարտեցին ցեղասպանութիւնը, զայն որակելով որպէս մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւն, սակայն ոչ մէկ պատիժ, ոչ մէկ հատուցում սահմանեցին զայն գործադրողին՝ Թուրքիոյ: Մա փարիսեցիական շրթունքի մարգանք էր սոսկ որ յագուրդ տուաւ արդարութեան մեր պղատոնական զգացումին միայն: Իսկ Թուրքիան ցարդ կը



շարունակէ իր ժխտողական քաղաքականութիւնը եւ կը մնայ անպատիժ ու անսանձ: Աւելին, ան նորանոր միջոցներով կը շարունակէ իր հայասպան քաղաքականութիւնը: Վկայ՝ Հայաստանի Հանրապետութեան շրջափակումը: Վկայ՝ Արցախի 44-օրեայ պատերազմին՝ Ատրայէճանին տրամադրած իր ռազմական, հետախուզական եւ տարբեր տեսակի լայնածաւալ աջակցութիւնը՝ «Մէկ ազգ, երկու պետութիւն» կարգախօսով:

Եւ եթէ՝ հրաշքի համազօր երեւոյթ էր, երբ ցեղասպանութեան այդ դժոխային օրերէն միայն երեք տարի ետք՝ հայ ժողովուրդը, արիւնաքամ եւ կոտորակուած, ոյժ գտաւ իր մէջ բռունցքուելու եւ ետ մղելու թշնամի վոհմակները իր հայրենիքի արեւելեան հատուածէն եւ կերտել Սարդարապատի փառահեղ յաղթանակը, ծնունդ տալով նոր դարերու իր պետականութեան,

Եւ եթէ՝ հրաշքի համազօր երեւոյթ էր նմանապէս որ փոշիացած ու տարտղնուած տարագիր ժողովուրդը կըրցաւ ոտքի ելլել, կազմակերպուիլ եւ համայնքներ կառուցել աշխարհի չորս ծագերուն եւ համախմբուիլ իր նորակերտ կառոյցներուն շուրջ՝ դպրոց, եկեղեցի, ակումբ. մամուլ...եւ հայ մնալ, հաւատարիմ իր մեսրոպաշունչ գիրին ու լեզուին, սերունդէ-սերունդ փոխանցուած սրբազան աւանդին,

Բայց այնուամենայնիւ, այս հրաշքի համազօր երեւոյթներուն քովն ի վեր, մեզի պակսեցան ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹԻՒՆԸ եւ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԸ մեր ոյժերը հաւաքագրելու եւ ստեղծելու հայրենագուրկ տարագիր աւեմտահայութեան ներուժը կեդրոնացնող համակարգ: Մենք ցարդ չկրցանք հիմնել տարագիր արեւմտահայութեան ներուժը խտացնող կամ համակարգող խորհուրդ մը, կառոյց մը, որուն մէջ ներկայացուին մեր երեք յարանուանութիւնները, կուսակցութիւնները, մտաւորականները, իրաւաքաղաքագէտները, բոլոր տեսակի միութիւնները: Սա կրնայ ըլլալ հիմնաքարը մեր Իրաւապահանջատիրութեան Դատին, զայն հասցնելու համար միջազգային ամպիոններ, ինչպիսին է Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը թէ այլ: Քանզի միայն նման իրաւական անձնաւորութիւնը կամ legal entity-ն կրնայ խօսիլ մեր անունով եւ մեզ ներկայացնել նման ատեաններուն մօտ:

Մեզի պէտք են անհրաժեշտօրէն տեսլական ունեցող, ինչպէս նաեւ իրաւաքաղաքական հմտութիւն ունեցող նուիրեալ անձինք, որոնք կարենան մշակել պահանջատիրական ռազմավարութեան ուղին եւ անշուշտ ընդգրկուին նաեւ այդ խորհուրդին մէջ:

Չուզահեռաբար, Հայաստանի Հանրապետութենէն ներս ալ, մենք չկրցանք մշակել ազգային-պետական ռազմաքաղաքական ծրագիր, միշտ ապաւինելով այլոց օգնութեան եւ մսխելով մեր հնարաւորութիւնները ի սպաս օտարին, ի սպաս նեղ-անձնական եւ խմբակային շահերու: Ասոր իբր հետեւանք, կորսնցուցինք ազատագրեալ Արցախը, որ հայաթափուեցաւ նոյն թուրքին ձեռամբ:

Այսօր ալ, մեր Հանրապետութիւնը կը գտնուի իր գոյութեան սպառնացող ծանրածանր մարտահրաւերներու դէմ յանդիման:



Մենք անհրաժեշտօրէն պիտի վերակազմակերպուինք՝ Հայաստան եւ Սփիւռք, յստակացնելով մեր ազգային-պետական օրակարգը, ազգային-պետական ռազմավարութիւնը եւ զիրար լրացնելով, զիրար ամբողջացնելով՝ ստանձնենք մեզի ինկած բաժին-պարտաւորութիւնը ամենայն յանձնառութեամբ, ամենայն հմտութեամբ եւ ամենախոր նուիրումով: Մեզմէ հեռու պիտի վանենք ամէն նահանջականութիւն, պարտուողականութիւն կամ յարմարողականութիւն:

Յաղթանակը միշտ ալ կը պատկանի խիզախօրէն պայքարողին, յանդուգն մարտնչողին եւ երբեք յուսալքուողին: Յիշենք որ ազգերը չեն մեռնիր երբեք, այլ անձնասպան կ'ըլլան միայն: Անձնասպան կ'ըլլան, երբ կը կտրուին իրենց արմատներէն, մաքառելու եւ ոգորելու իրենց կամքէն, կ'ըլլան օտարին բարեհաճութեան անձնատուր խլեակներ...

Ցեղասպանութեան եւ Հայրենագրկումի 110րդ տարելիցին, կը խոնարհինք մեր բոլոր նահատակներու յիշատակին առջեւ՝ Ծիծեռնակաբերդի բարձունքէն մինչեւ Տէր Զօրի քանդուած եկեղեցին, մինչեւ ամէնէն խոնարհ յուշակոթողն ու մատուռը, որոնք կառուցուած են իրենց յիշատակին: Մեր մեռելները կ'ապրին մեր մէջ իրենց պատգամով եւ ուղերձով որպէս անլռելի զանգակատուն...

Կը վերանորոգենք մեր հաւատարմութեան ուխտը եւ յանձնառութիւնը:

Քաղաքական անկոտորում եւ յամառ կամքով մենք կրնանք նոյնիսկ անկարելի թուող դժուարութիւնները յաղթահարել եւ կերտել բանաստեղծին բառերով՝ օգոստափառ նոր արշալոյս, եթէ կարենանք ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈԳԻՈՎ, ՀԱՄԱԽՄԲՈՒԱԾՈՒԹԵԱՄԲ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԻԼ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՓԻՒՌՔ: Օ՛Ն ԱՆԴՐԱՌԱԶ:


ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ

ԹԵՀՐԱՆԱՀԱՅ ԽՄԲԱԳԻՐԸ ՓԱԿԱԳԾԵՐ Է ԲԱՑՈՒՄ

Զի կարելի անտեսել էսկալացիայի վտանգը, բայց...

29 Մարտ, 2025



Ինչպէս են պաշտօնական Իրանում գնահատում Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործերի նախարարի այցը Հայաստան, այդ համատեքստում Հայաստան-Իրան յարաբերութիւնները ի՞նչ փոլում են հարցը եւ ոչ միայն «Իրավունքը» փորձել է ստանալ Թեհրանի հայկական «Արաքս» թերթի գլխաւոր խմբագիր **Մովսէս Քեշիշեանից**.



- Այցը կատարուեց կարելոր ժամանակ: Դրանից առաջ ԱՄՆ նախագահի յատուկ ներկայացուցիչ Ստիվ Վիտկաֆն եղել էր Բաքուում, իսկ նոյն ժամանակ Թուրքիայի ԱԳ նախարարն Վաշինգտոնում և երեք հանդիպումներում էլ գրեթէ նոյն հարցը՝ Հայաստան-Ադրբեջան խաղաղութեան գործընթացը քննարկման է դրուել և իրար նկատմամբ ոչ բարեկամական դիրքորոշումներ ունեցող Իրանն ու ԱՄՆ-ն գրեթէ նոյն նախադասութիւնն են հնչեցրել այս կապակցութեամբ՝ պետք է յարգուեն միջազգային սահմանները: Իսկ այս ընդհանուր համատեքստում Իրան-Հայաստան յարաբերութիւնները գնալով աւելի են խորանում և ամրապնդուում:

Յիշեցնեմ, որ նախարար Արաղչին Երեւանում յայտարարել է նաև, որ Իրան-Հայաստան տնտեսական յարաբերութիւնների ծաւալը հատել է մէկ միլիարդ դոլարի սահմանը, ինչը նշանակում է որ Թեհրանը ծրագրել է աւելի և աւելի բարձրացնել երկու բարեկամ երկրների յարաբերութիւնների մակարդակը ե՛ւ տնտեսական ե՛ւ քաղաքական առումով:

- Իրանի արտգործնախարարը նշեց, որ Հարաւային Կովկասում Էսկալացիայի վտանգի մեծացում կայ, նկատի ունի Ադրբեջանի՞ն, թե՞ ոչ:

- Բնական եւ հասկանալի է, որ նախարար Արաղչին ներկայ ժամանակաշրջանում չէր ցանկանայ նշել Ադրբեջանի անունը, բայց վերջին հաշուով փաստ է եւ ոչ մէկի աչքից հեռու չէ, որ այն կողմը ով խօսում է սպառնալիքների լեզուով ու ժամանակ առ ժամանակ նորանոր նախապայմաններ է առաջ քաշում դա Բաքուն է: Եւ Իրանի ԱԳ նախարարի նշման մէջ նաեւ հաշուի է առնուած ալիւեւան ռեժիմի հռետորաբանութիւնը:

- Ադրբեջանը, նկատի ունենալով նաեւ Իրանի դիրքորոշումները, այսօր գնալո՞ւ է ռազմական գործողութիւնների, թե՞ ոչ:

- Չի կարելի անտեսել Էսկալացիայի վտանգի հաւանականութիւնը, բայց հաշուի առնելով այն փաստը, որ «Հայաստանի Հանրապետութեան և Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ խաղաղութեան և միջպետական յարաբերութիւնների հաստատման մասին» համաձայնագրի նախագծի համաձայնեցումն ընդառաջուել է տարածաշրջանի ու նաեւ գերհզօր պետութիւնների ու միջազգային կառոյցների կողմից, դժուար թէ Բաքուի բռնապետը իրեն իրաւունք տայ նոր պատերազմ սկսել: Այս հարցում, ի հրակէ, իր կարելոր և նշանակալի դերն ունի նաեւ իրանական կողմի դիրքորոշումը՝ միջազգայնօրէն ճանաչուած սահմանների անխախտելիութեան կապակցութեամբ:

- Իրանի առաջ այսօր ի՞նչ լուրջ խնդիրներ կան, որոնք կարող են ազդել նաեւ Հայաստանի վրայ:

- Իրանի առջև ծառացած հիմնական և կարելոր մարտահրաւերը Արեւմուտքի և առաջին հերթին ԱՄՆ-ի հետ յարաբերութիւնները կարգաւորելու հարցն է, ինչի լուծումը կամ դէպի լուծում տանող գործընթացի մեկնարկը գոյութիւն ունեցող լարուածութիւնը չեզոքացնելուց բացի, կարող է Իրանին օգնել նաեւ իր տնտեսական դժուարութիւնները յաղթահարել և աշխարհի (հիմնականում արեւմտեան) ազդեցիկ երկրների հետ յարաբերութիւնները որոշակիօրէն կարգաւորել, ինչը բնականաբար, կ'ամրապնդի Թեհրանի դիրքերը տարածաշրջանում և ողջ աշխարհում, և որը մեծ օգուտ կը բերի նաեւ Հայաստանի Հանրապետութեանը, ում համար շատ կարելոր է Իրանի ազդեցութեան հզօրացումը Հարաւային Կովկասում:

Iravunk.com

ԿԻՊՐԱՀԱՅ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԻՊՐՈՍԻ ՄՕՏ ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒՀԻ ՏԻԿ. ԻՆՆԱ ԹՈՐԳՈՄԵԱՆԻ ՀԵՏ



Կիպրոսի Առաջնորդարանի, Պատգամատրական, Վարչական, կուսակցական եւ այլ կառույցներու կողքին, ՀՀ Վսեմաշուք դեսպանուհին Տիկ. Իննա Թորգոմեան հանդիպում ունեցաւ Կիպրահայ մամուլի ներկայացուցիչներուն հետ՝ «Կիպրահայեր» կայքի պատասխանատու Պրն Սիմոն Այնէճեանի եւ «Ազատ Խօսք» առցանց ամսաթերթի խմբագիր Տիկ. Երան Գոյունճեանի հետ, ի

ներկայութեան կիպրահայ համայնքի Պետ. Ներկ, Տիար Վարդգէս Մահտեսեանի, վերջինիս Գրասենեակին մէջ՝ Չորեքշաբթի 2 Ապրիլ 2025, կ.ե. ժամը 5:00ին:

Խօսուեցաւ ընդհանրապէս ՀՀ դեսպանութեան մամուլի հետ համագործակցութեան անհրաժեշտութեան մասին ի խնդիր Կիպրոս-Հայաստան փոխգործակցութեան ամրապնդման եւ արդիւնատրման, գերագոյն նպատակ ունենալով Հայաստանի պետականութեան հզօրացումը: Մամուլի ներկայացուցիչները շեշտեցին կարեւորութիւնը Հայաստան-Սփիւռք համագործակցութեան, համահայկական ներդրոյի ինքնակազմակերպման գերխնդրին, ուր իր որոշիչ դերակատարութիւնը ունի յատկապէս մամուլը:

Նշենք որ ՀՀ Նախագահ Վահագն Խաչատրեանի հրամանագրով՝ Իննա Թորգոմեանը նշանակուած է Կիպրոսի Հանրապետութեան մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ և լիազօր դեսպան:

Հրամանագրին մէջ արձանագրուած է. «Հիմք ընդունելով վարչապետի առաջարկութիւնը՝ համաձայն Սահմանադրութեան 132-րդ յօդուածի 1-ին մասի 2-րդ կէտի, ինչպէս նաեւ «Դիւանագիտական ծառայութեան մասին» օրէնքի 13-րդ յօդուածի 3-րդ մասի և 14-րդ յօդուածի. Իննա ԹՈՐԳՈՄԵԱՆԻՆ նշանակել Կիպրոսի Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ և լիազօր դեսպան (նստավայրը՝ Նիկոսիա)»:

Նշենք որ Վսեմաշուք դեսպանուհին ունի դիւանագիտական լայն փորձառութիւն եւ պատրաստուածութիւն, տարիներով աշխատած է Իտալիոյ Հոռոմ քաղաքի մէջ, ինչպէս նաեւ Նիւ Եորքի մէջ:

ԱԶԱՏ ԽՕՍՔԸ ջերմօրէն կը շնորհաւորէ ՀՀ դեսպանուհին, Վսեմաշուք Տիկ. Իննսա Թորգոմեանը իր պաշտօնակոչման առիթով, իրեն մաղթելով ամէն յաջողութիւն՝ Հայաստան-Կիպրոս փոխարարերութեանց սերտացման եւ արդիւնաւորման գծով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԿԻՊՐՈՍԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ



The Armenian Genocide Monument, designed by architect John Guevherian in 1990, is located in the courtyard of the Sourp Asdvadzadzin Cathedral in Strovolos. The design features three marble arches - representing Armenia and the two Diasporas. The black granite cross is made by Armenian sculptor Levon Tokmadjian. Source : Wikipedia

Շաբաթ 12 Ապրիլ 2025՝ արինի տուչութիւն, ժամը 15:00-18:00, Նարեկ վարժարան, Նիկոսիա:

-Հինգշաբթի 24 Ապրիլ 2025՝ Ս. Պատարագ, ժամը 9:30-ին, Հանդիսապետութեամբ՝ Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանի, Ս. Աստուածածին Մայր եկեղեցի, Նիկոսիա:

-Շաբաթ 26 Ապրիլ 2025՝ Քայլարշաւ:

-Երիտասարդական քայլարշաւ – 17:00

(«Զինա Փալաս»ին կից գտնուող կանգառէն դէպի Արմենիաս Պողոտայ)

-Համայնքի քայլարշաւ – 19:00

(Արմենիաս Պողոտային սկիզբը գտնուող Կիպրոս-Հայաստան Բարեկամութեան պուրակէն դէպի Ցեղասպանութեան Յուշակոթող)

-Շաբաթ, 26 Ապրիլ 2025 - (Քայլարշաւի աւարտին ժամը 19:30ին)

Ցեղասպանութեան Ոգեկոչման Ձեռնարկ

Ցեղասպանութեան Յուշակոթող (եկեղեցւոյ շրջափակ) – 19:30



- Ուղերձներ՝ Կիպրահայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոս Օհանեան
- Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ՝ Վարդգէս Մահտեսեան
- Եւրոերեսփոխան Կոստաս Մարիտիս
- Սուրբ Աստուածածին Եկեղեցոյ Երգչախումբ
- Ծաղկեպսակներու զետեղում

-Հինգշաբթի 1 Մայիս 2025՝ The Hidden Map ֆիլմի ցուցադրութիւն, «Պանթէոն» շարժապատկերի սրահ-ժամը 19:00-ին:

-Հինգշաբթի 8 Մայիս 2025՝ Հայոց Ցեղասպանութեան 110րդ տարելիցին առթիւ, հայ համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան իր խօսքը պիտի ուղղէ Խորհրդարանի լիագումար նիստին, ժամը 16:00-ին:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ 50-ԱՄԵԱԿ

ՊԱՏԵՐԱԶՄԸ, ՈՐ ԿԵԱՆՔ ՇԻՆԵՑ

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ



Պատերազմը ահաւոր ու սարսափելի բան է: Մէկ կողմէ կը պատճառէ մահ ու կոտորած, բայց նաեւ՝ վախ եւ ընկճումածութիւն: Շարժապատկերի վրայ պատերազմական ժապաւեններ դիտելը կրնայ դիւրին թուիլ, բայց պատերազմի մէջ ապրիլը ուրիշ բան է: Այս ուրիշ բանին մէջ պետք է իսկապէս ապրիլ եւ տեսնել կեանքի ողբերգութիւնները: Սիրելիներու եւ ծանօթ-անծանօթներու մահը:

Անշնչացած դիակներ՝ սփռուած հոս

ու հոն, տակաւին՝ անհետ կորսուածներ: Տուներու եւ շէնքերու քանդումներ եւ գետնայարկերու տակ ապաստանարաններու մէջ ապահով թաքստոց մը փնտռելու մղձաւանջ: Այս ապաստանարաններուն մէջ ստեղծուած քառսային վիճակ, արդարեւ, շնչահեղձ ըլլալու աստիճան կողք կողքի կծկուածներ՝ դրացի թէ ոչ, որոնց հետ ստիպուած ես անցընել իւրաքանչիւր վայրկեանը: Այս վայրկեաններուն պիտի հաշուես իւրաքանչիւր հրթիռ եւ ռումբ, որ կը պայթի, եւ որուն պիտի յաջորդեն քանդումները եւ փշրտոցներն ու անոնց ձայներուն ահաւորութիւնը: Չեն ուշանար վլվլուկները եւ հարցումները. «Արդեօք որո՞ւ տունը քանդուեցաւ»:



Կայ պատերազմին միւս երեսը: Այդ ալ կեանքը շինելու գրաւականը՝ նոյնինքն պատերազմի արհաւիրքին ու անորոշութեան մէջէն: Այս կրնայ զարմանալի եւ անհաւատալի թուիլ, բայց իրաւ է: Պատերազմը կը նմանի երկսայրի սուրի՝ մէկ կողմը կը քանդէ եւ միւսը կը շինէ: Այս քանդելու եւ շինելու կեանքն է, զոր ապրեցանք իբրեւ լիբանանահայեր՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմին ընթացքին: Անվերջանալի թուացող այս ահաւոր փորձառութիւնը մինչեւ այսօր կը շարունակուի, եւ Լիբանան կը մաքառի այս պատերազմի հետեւանքներուն ձգած անորոշութեան եւ անկայունութեան մէջ՝ անկախ այն երեւոյթէն, որ գէթ ռումբերը դադրած են:

Այս կեանքը սկսաւ 13 ապրիլ 1975-ին:

Հայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանի աւարտական դասարանի աշակերտներ էինք՝ Պէյրութ: Կը պատրաստուէինք շրջանաւարտից հանդէսի, որմէ ետք կ'երազէինք սկսիլ մեր երիտասարդական կեանքի նոր փուլին: Խանդավառ էինք ապագայի տեսլականով եւ անոր մէջէն կը տեսնէինք Պէյրութի ուժականութիւնը եւ ջերմութիւնը:

Ապրիլ 13-ը եկաւ շրջելու ամէն տեսլական, խափանելու ամէն երազ: Պէյրութի ջերմութիւնը չքացաւ, եւ անոր ուժը տեղափոխուեցաւ պատերազմական դաշտ, որ երկիրը դրաւ բախտորոշ նոր փուլի մը սեմին: Պատերազմի տարբեր փուլերուն հետ մենք ալ հասանք աւարտական հանդէսի օրը: Մեր հանդէսը եղաւ կոկիկ եւ ամփոփուած եկեղեցոյ սրահին մէջ՝ փոխանակ դպրոցին բակին: Այս հանդէսը փոխանակ միասնաբար կեանքի նոր փուլ անցնելու ազդանշան տար, եղաւ դասընկերներու հրաժեշտի պահ մը: Հրաժեշտ՝ դպրոցէն, իրարմէ, բայց նաեւ՝ երկրէն: Դասընկերներս մեծ համեմատութեամբ գաղթեցին Ամերիկա եւ Քանատա:

Հասաւ նաեւ իմ կարգս՝ Ամերիկա մեկնելու: Չէ՞ որ բոլորս ալ տոգորուած էինք «Ամերիկեան երազով»: Այսպէս ըսած՝ պատերազմի արհաւիրքէն դէպի «աւետեաց երկիր» երթալու ընթացք:

Ես չկրցայ հասնիլ Ամերիկա: Մուտքի արտօնագիրս մերժուեցաւ եւ մնացի Պէյրութ: Մէկ կողմէ ապրեցայ պատերազմի արհաւիրքը, միւս կողմէ՝ ներաշխարհի ընդվզումներս: Իմ «ինչո՞ւ»-ներուս տարափը կը թափէի անընդհատ: «Ինչո՞ւ ես ալ բախտը պիտի չունենայի դասընկերներուս պէս աւելի ապահով երկիր երթալու եւ պիտի մնայի այս պատերազմական վիճակին մէջ»: Հարցումներ, որոնց պատասխանները կ'ուշանային:



Փոքր տարիքէս մեծցած էի եկեղեցական շրջանակի մէջ: Լաւապէս գիտէի Աստուծոյ խօսքը, որ կ'ըսէր՝ «Իմ ճամբաներս քու ճամբաներդ չեն, ոչ ալ իմ խորհուրդներս՝ քու խորհուրդները»: Այս տարբեր խորհուրդները եւ ճամբաները սորվելու գործընթացը եղաւ երկար՝ Լիբանանի պատերազմական այդ ահաւոր օրերուն:

Պատերազմական օրերուն հետ սկսայ տեսնել, թէ ինչպէ՛ս կեանքը պիտի գտնէր իր ընթացքը: Այս ընթացքին մէջ էր համալսարանական տարիներու մեր ստացած ուսումը, երբ իւրաքանչիւր օր պիտի անցնէինք արեւելեան Պէյրութէն դէպի արեւմտեանը: Հոս կար Թապարիսի կամուրջը եւ Պարպիրի անցքը, որոնք զիրար կը հրմշտկէին եւ կարծես իրենց հերթին պիտի դառնային «մահուան շուքի ձորեր»: Պիտի անցնէինք արձակազեններու առատօրէն բաշխուած փամփուշտներու տարափին մէջէն: Եւ կար հաշուարկը, թէ այդ փամփուշտը մեզի պիտի դպչի՞, թէ ո՛չ:

Չէին ուշանար դասապահերուն թէ քննութեան օրերուն յանկարծ ստեղծուած ռումբերու «ելոյթները»: Այս ռումբերուն ստեղծած վախի ու սարսափի մթնոլորտին մէջ՝ դասքննութիւն շարունակելու անհրաժեշտութիւնը: Պատերազմին ստեղծած հակասական իրավիճակներն էին, որոնք քով-քովի գալով՝ կը ստեղծէին մեր կեանքերուն իրական համայնապատկերը:

Պատերազմական օրերու մեր կեանքը կը գլորուէր եւ իր ընթացքը կը բռնէր: Պատերազմ է, բայց կեանքի եւ պատմութեան սլաքը չէր կեցած: Չէինք կրնար ըսել, որ մենք պատերազմի մէջ էինք, եւ կեանքը պէտք է ընդհատուի մինչեւ կացութեան բարուք լուծուի: Լուծումը հորիզոնի վրայ երեւցող-չերեւցող իրականութիւն էր, երեւի՝ աւելի չերեւցող: Մենք այս չերեւցող լուծումներու մէջէն ունէինք իրականութիւն մը, զոր պէտք էր տնօրինել: Պատերազմը կեանքը կը քանդէր, իսկ մենք պէտք էր նոյն կեանքը շինէինք:

Դժուար էր այս պատերազմի մթնոլորտը բացատրել մեր ընտանեկան պարագաներուն եւ բարեկամներուն, որոնք Լիբանանէն դուրս կ'ապրէին: Անոնք կը հետեւէին լուրերուն եւ զարգացումներուն ու չէին կրնար կամրջել քանդել-շինելու այս իւրայատուկ եւ տարօրինակ մէկտեղումը: Մահուան եւ կեանքի այս իրականութիւններու միջեւ կը փորձէինք հաւասարակշռութիւն ներմուծել: Պատերազմը, որ կը քանդէր եւ մահ-աւեր կը ստեղծէր: Իսկ կեանքը իր պարտադրանքները կը տնօրինէր մեր վրայ, որպէսզի շինենք զայն: Շինել կեանքը՝ անհատական, հաւաքական, գաղութային եւ ազգային:



Գաղութային ու ազգային կեանքը նոյնպէս կանգնեցաւ քանդել-շինելու այս խաչմերուկին վրայ: Գաղութը պիտի տքներ, որպէսզի հասներ քանդումին, աւերին, տուժածներու ու տակաւին՝ սգաւորներուն: Գաղութը նոյնպէս հետամուտ պիտի մնար, որ ազգային կեանքը շինէ: Լիբանանահայ գաղութ համայնքային-կուսակցական ղեկավարութեան հեռատես եւ առարկայական մօտեցումով որդեգրեց «դրական չեզոքութիւն»-ը պատերազմի այս խառնիճաղանճ մթնոլորտին մէջ՝ որպէս հայութեան կեցուածք: Պատերազմի այդ օրերու զարգացումները ցոյց տուին, որ հայութեան այս կեցուածքը եղաւ օրինակելի եւ գաղութը խնայեց շատ աւելի մեծ կորուստներ: Պատմութիւնը անվարան պիտի արձանագրէ լիբանանահայ գաղութին այս կեցուածքը՝ որպէս հայուն մէկ յաջող եւ արդիւնաւետ ազգային ռազմավարութիւն: Ռազմավարութիւն մը, որուն հիմքը հաւաքական միտքն է, եւ որ՝ սատարեց պատերազմի օրերուն հայուն կեանքը շինելու հրամայականին:

Իսկ այսօր:

Յիսուն երկար տարիներէ ետք յետադարձ ակնարկ մը ընելով՝ կը տեսնենք, թէ ինչպէ՛ս Աստուած ինձի ցոյց տուաւ իր խորհուրդը եւ իր ճամբան: Չեմ գիտեր, թէ ինչպիսի՛ կեանք պիտի ունենայի, եթէ 1975 թուականին ես ալ Ամերիկա մեկնէի: Այսօր այդ մէկը չեմ ուզեր վեր առնել, այլ պիտի ուզեմ վեր առնել այն, թէ պատերազմը եւ անոր գործած աւերն ու վախը, որոնք իրենց հետքը ձգած են մինչեւ օրս, ահաւոր փորձառութիւն էին: Այս ահաւոր փորձառութիւնը սորվեցուց մեզի նաեւ կեանքը շինել: Թէ անձնապէս, բայց պիտի յանդգնիմ ըսելու՝ հաւաքաբար: Պատերազմը, որ քանդեց կեանքը, նաեւ սորվեցուց մեզի կեանքը շինելը:

Քրիստոնէական աստուածաբանութեան հիմքն ալ ճիշդ այս իրականութեան մէջ է: Քրիստոս ինք ալ պատերազմեցաւ, երբ խաչին վրայ մահանալէ ետք երեք օրեր գերեզման, իմա՝ դժոխք, իջաւ: Հոն Քրիստոս պատերազմեցաւ մեղքին դէմ: Երրորդ օրը ան դուրս եկաւ յաղթական եւ յարութիւն առնելով, նոր կեանքը ստեղծեց: Այս իմաստով, մենք, որ Աստուծոյ պատկերովը ստեղծուած ենք իւրաքանչիւրս, նաեւ ստեղծագործ ենք: Լիբանանի պատերազմի այդ ահաւորութեան մէջ , երբ մէկ կողմէ մարտնչեցանք, բայց նոյնքան նաեւ սորվեցանք կեանքը շինել:

Կեանքը շինելը շարունակական գործընթաց է: Պատերազմները կը շարունակուին եւ պիտի շարունակուին: Մահուան ու կեանքի միջեւ եղած ամենօրեայ բախումը արկայ է նաեւ

այսօր եւ երեւի պիտի շարունակուի: Այս վիճակներուն մէջ մենք դարձեալ դէմ յանդիման պիտի կանգնինք կեանքը շինելու հրամայականին հետ:

Լիբանանահայ գաղութը լիբանանեան պատերազմի ընթացքին յաջողեցաւ, քանդումի գուգահեռ, նաեւ կեանքը շինել, քանի որ հաւատաց հաւաքական միտքի ու միասնական կեցուածք-ռազմավարութեան: Այս ապրուած իրականութիւններու մէջէն է, որ հայուն կեանքը կը շինուի միասնական ջանքով ու ճիգով:

Երբ առիթը ունենամ խօսելու պատերազմի օրերու փորձառութիւններուս մասին, միշտ ալ կրկնած եմ ու պիտի շարունակեմ կրկնել. «Պիտի չուզէի եւ պիտի չուզեմ, որ ռեւէ անհատ ապրի պատերազմի փորձառութիւնը»: Պատերազմի փորձառութիւնը ահաւոր է: Պատերազմի մէջ ապրուած իւրաքանչիւր օրը մարդը կրնայ մաշեցնել:

Բայց կայ նաեւ մարտահրաւերը՝ թէ պատերազմի մթնոլորտի մէջէն նաեւ կը ստրվինք կեանքը շինել: Լիբանանի պատերազմը եթէ կեանքը քանդեց, բայց նաեւ ստրվեցուց զայն շինել:


Պիտի հաւատանք կեանքը շինելու: Իւրաքանչիւր հայ՝ ես, դուն եւ բոլորս:

Միասին եւ կեանքը շինելու յանձնառութեամբ:

Ապրիլ 2025

ՊԱՏՄԱԲԱՆ ԶԱԻՆ ՄՍՐՐԼԵԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ՀԱՄԱՐ» ԱՆԳԼԵՐԷՆ ՀԱՏՈՐԸ


Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Պատմաբան Զաին Մսրրլեան մագիստրոսական տիտղոսով աւարտելէ ետք Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Պատմութեան ճիւղը՝ մասնագիտանալով Միջին Արեւելքի պատմութեան մէջ, իր դոկտորականը ստացած է Անգլիոյ մէջ: Ան իր ասպարէզին սկիզբէն սկսած է հետաքրքրուիլ եւ ուսումնասիրել Հայաստանի պատմութեան եւ Հայոց Ցեղասպանութեան մասին գիրքեր, ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, հայերէն ու օտար լեզուներով եւ ուր որ տեղեկութիւններու սխալներ նշմարած է, մատնանշած է զանոնք եւ անմիջապէս հեղինակներու, խմբագիրներու եւ հրատարակիչներու նամակներ յղած է լուսաբանութեան համար: Այս ծիրին մէջ



ան 1972-ին ուսումնասիրած է «Բրիտանական Հանրային Վաւերագրութեանց Գրասենեակ»ի (British Public Record Office) արխիւները, ուր տեսած է նամակներ ուղղուած կառավարական պատասխանատուներու, որոնց վրայ արձանագրուած են Բրիտանիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան (Foreign Office) կողմէ նշումներ եւ ակնարկութիւններ, որոնց կարեւորութեան անդրադարձած է հեղինակը:



Այս ուղղութեամբ յարատեւ աշխատանքի իբրեւ արդիւնք պատմաբան Զաւէն Սարըլեան իր հաւաքած տեղեկութիւնները եւ կատարած լուսաբանութիւնները ի մի բերելով լոյս ընծայած է անգլերէն լեզուով «Հայկական Հարցին Համար» (For The Armenian Cause) խորագիրով հատորը, Սիփան Հրատարակչատուն, Պէյրութ, 2023, 183 էջ:

2 Յունուար 1967-ին ամերիկեան «Նիուզուիք» շաբաթաթերթին մէջ անստորագիր յօդուած մը հրատարակուած է՝ Խորհրդային Միութեան վարչապետ Ալեքսէյ Բոսիկինի Անգարա այցելութեան առիթով: Յօդուածին անյայտ հեղինակը փափաք կը յայտնէ վերջին 250 տարիներու ընթացքին Թուրքիոյ եւ Ռուսաստանի միջեւ յաճախակի պատերազմներուն վերջ դնել եւ շրջանին՝ մէջ խաղաղ ապրիլ: Ան նաեւ կը յիշէ Ստալինի պահանջքը՝ Տարտանէլի եւ Վոսփորի մէջ Խորհրդային Միութեան բաժին ապահովելը: Սակայն ոչ մէկ ակնարկութիւն կայ

հոն հայոց բռնագրաւեալ հողերուն մասին: Թուրքիոյ վարչապետ Տեմիրէլ փափաք յայտնած է որպէսզի երկու երկիրները յարգեն իրար ազգային ինքնիշխանութիւնը, հողերու ամբողջականութիւնը եւ իրաւունքներու հաւասարութիւնը:

Դոկտ Զաւէն Սարըլեան «Նիուզուիք»ի նամակ մը կ'ուղղէ ու հետեւեալը կը շեշտէ հոն. «Խորհրդային Միութիւնը իրաւունք չունի Թուրքիան հաւաստիացնելու անոր հողերու ամբողջականութեան մասին, այնքան ատեն որ հայկական հարց գոյութիւն ունի եւ հայոց հողերը բռնագրաւուած են»:

Դոկտ. Զաւէն Սարըլեանի սոյն նամակը «Նիուզուիք» իր 23 Յունուար 1967-ի թիւով կը հրատարակէ, անոր բաւական կարեւորութիւն տալով: Աւելին՝ հրատարակուած նամակին քով կ'երեւայ վարչապետ Տեմիրէլի նկարը, որուն տակ գրուած է՝ «Որո՞ւ հողերը» եւ աւելցնելով խորիմաստ վերնագիր մը՝ «Քու հողերդ իմ հողերս են...»:

Դոկտ. Զաւէն Սարըլեանի սոյն նամակը ամբողջութեամբ կ'երեւայ այս հատորի էջ 8-ին վրայ: Սոյն նամակը այդ օրերուն հայերէնի թարգմանուելով կը հրատարակուի Պէյրութի «Զարթօնք» եւ «Ազդակ» օրաթերթերուն մէջ: Այս հարցը մեծ աղմուկ եւ հետաքրքրութիւն կը յառաջացնէ ամէնուրեք: Թրքական թերթեր ու լրատուական միջոցներ ալ կ'անդրադառնան այս հարցին եւ նամակին, սակայն ինչպէս սպասելի է բացասականօրէն:

Գիրքին «Հայաստան – Դժուարին Երագ» խորագիրով հատուածին մէջ, Դոկտ. Զաւէն Սարըլեան նոյն խորագիրով ամերիկացի թղթակից եւ վերլուծաբան Ռայմընտ Ռ. Քոֆիի յօդուածը կը ներկայացնէ, որ Հայաստանի, Հայոց եւ Հայասպանութեան մասին է: Թղթակից Քոֆի 1971-ին Պէյրութ այցելութեան ընթացքին քաղաքին պատերուն վրայ կը նշմարէ որմագոյներ, որոնց նիւթն ու բովանդակութիւնը Հայաստանն է, ինչպէս նաեւ դատապարտում եղեռնագործ թուրքին: Որմագոյներուն վրայ գրուած են՝ «Ազատ Հայաստան», «Պատժեցէ՛ք Թուրք Ոճրագործները» եւ «Վերադարձուցէ՛ք Հայկական Հողերը», որոնք մեզի կը յիշեցնեն 20-րդ դարու մեծագոյն ողբերգութիւնը՝ Հայասպանութիւնը:



Քոֆիի յօդուածը կը նշէ հայոց պատմութենէն դրուագներ եւ տեղեկութիւններ, նաեւ այդ օրերու աշխարհի վրայ տարածուած հայկական գաղութներու եւ Խորհրդային Հայաստանի բնակչութեան թիւերը: Յօդուածին մէջ կը գտնենք հայկական կուսակցութիւններու մասին տեղեկութիւններ, ինչպէս նաեւ հայկական մամուլի օրկաններուն մասին տուեալներ:

Ռայմընտ Ռ. Քոֆի Պէյրութի մէջ հարցազրոյց ունեցած է Դոկտ. Զաւէն Մարրլեանի հետ, որմէ սոյն յօդուածին մէջ կը մէջբերէ Դոկտ Մարրլեանի խօսքերէն, որոնք ցոյց կու տան անոր հաստատ կեցուածքը Հայկական հարցին հողային դատ ըլլալուն եւ պահանջատիրութեան նկատմամբ:

1967-ին ՄԱԿ-ի «Տնտեսական եւ Ընկերային Խորհուրդ»ը իր հեղինակութեան տակ գործող «Մարդու Իրաւունքներու Յանձնախումբէն» կը պահանջէ ցեղասպանութեան շուրջ նոր ուսումնասիրութիւն մը կատարել, նկատի առնելով որ 1948-ի ցեղասպանութեան պայմանադրութիւնը ժամանակավրէպ դարձած էր: Զանազան մասնագէտներ գործի կ'անցնին եւ քանի մը տարի աշխատելէ ու դոկտ. Զաւէն Մարրլեանի բարեօգուտ եռանդուն գործունէութեան ու իմաստուն միջամտութենէ ետք, կը յաջողուի յարմար բանաձեւ մը գտնել: Մարրլեան նամակագրութեամբ կը միջամտէ խորհուրդ տալով եւ լուսաբանութիւններ կատարելով: Այսպիսով Բանաձեւի ամբողջութեան վրայ կ'աւելնայ 30-րդ պարբերութիւնը:

Պէյրութ հրատարակուող «Երիտասարդ Հայ» երկշաբաթաթերթը իր 1 Դեկտեմբեր 1973 թուակիր համարին մէջ այս մասին կը գրէ. «Այս բոլոր աշխատանքն էտք, անկարելի է չունենալ տխուր մտածում մը, անձ մը, յամառ յետապնդումներով, յաջողեցաւ հոն ուր կազմակերպութիւններու առաջնորդները, որոնք հայ ազգին ճակատագիրը բարելաւելու համար կ'աշխատին, ձախողեցան: Պրն. Զաւէն Մարրլեանի գործը փաստ մըն է որ կարելի է յաջողութեան հասնիլ անպայման: Պարզապէս կարելոր է գիտնալ միջոցներն ու ճանապարհը...» (էջ 46):

ՄԱԿ-ի «Ցեղասպանութեան Ոճիրը Պատժելու Եւ Կանխարգիլելու Ուսումնասիրութեան» 30-րդ պարբերութեան հաստատման ջանքերուն ու եռանդուն աշխատանքներուն մէջ եւս նկատառելի է պատմաբան Զաւէն Մարրլեանի ներկայութիւնը՝ նամակագրութիւններով, որոնց միջոցաւ ան իմաստուն խորհուրդներ կու տայ եւ դիպուկ նկատառումներ կ'ընէ: Այս մասին մանրամասնութիւններ տրուած են հեղինակին կողմէ հատորին էջ 47-82-ի մէջ:

Զուիցերիոյ Խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ջանքերուն մէջ եւս, Դոկտ. Զաւէն Մարրլեանի գործն դերը յստակօրէն կ'երեւայ այս հատորին մէջ ներկայացուած նիւթերէն, հատորին մէջ էջ 83- 97:

Ապա կը յաջորդէ Լոնտոնի «Կայսերական Պատերազմական Թանգարանը Եւ Հայոց Ցեղասպանութիւնը» հիմնարկին կազմակերպած ցուցահանդէսը, որուն նիւթն է «Ցեղային Վայրագութիւնները»: Այս ցուցահանդէսը բաւական բարկացուցած է թրքական պետութիւնը, որ Բրիտանական կառավարութեան բողոքագիր մը ներկայացուցած է այս առնչութեամբ, որուն վերաբերող նիւթը կը գտնենք հատորին էջ 98-105-ի մէջ:

Հատորին վերջաւորութեան կայ հեղինակին՝ Դոկտ. Զաւէն Մարրլեանի կենսագրութիւնը էջ 181-183-ի վրայ:

Դոկտ. Զաւէն Մարրլեանի այս գիրքը անգամ մը եւս կու գայ հաստատելու հեղինակին անխոնջ ու մանրակրկիտ հետեւողական աշխատանքը՝ Հայկական հարցի մանրամասնութիւններու լուսաբանման եւ բացատրութեան դժուարին աշխատանքին մէջ, որուն համար կը շնորհաւորենք հեղինակը:

ՍՈՒՐԻԱ ԵՒ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԻՒՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒ ՓՐԿՈՒԹԻՒՆ

Պարոյր Յ. Աղպաշեան



Ամբողջ Միջին Արեւելքը կ'ապրի ահաւոր եւ աննախընթաց եռք մը, որ կը սպառնայ շարք մը երկիրներու ներքին քայքայումներուն, կազմաբեկումներուն ու վարչակարգերու փոփոխութիւններուն:

Անշուշտ, այդ բոլորը պատահական չեն, ինքնըստինքեան չեն, ոչ ալ անցողակի, այլ՝ խորապէս գիտակցուած ու ծրագրուած, նախատեսուած ու դասաւորուած:

Աշխարհին դէմ հիւսուած ոտնձգութիւնները բազմատեսակ ու բազմազոյն են, իսկ զանոնք իրականացնողները՝ բազմազուլիս ու բազմաշերտ, իրենց կողքին ունենալով խորհրդաւոր ու մշուշապատ ուժեր ու տարրեր:

Մակայն, ինչո՞ւ արաբական կարգ մը երկիրներու նկատմամբ կան թշնամիներ ու հակառակորդներ, ռիսակալներ ու վրէժխնդիրներ, զանոնք չեզոքացնելու ու շոգիացնելու գնով հաշուեյարդար տեսնելու, լաւագոյն պարագային զանոնք ստրկացնելու կամ իրենց կառքերուն լծելու, որովհետեւ անոնք չեն ենթարկուիր օտարամուտներու քմայքին, չեն հանդուրժեր խորթապինդ թափանցումները, չեն համակերպիր հալածական փորձերուն, բայց, մանաւանդ չեն հրաժարիր իրենց ազգայնական սկզբունքներէն, հաւատամքներէն եւ արեւելումներէն:

Հոս ինքնին կը ծագի սուր ու հատու հարցումը. ինչո՞ւ տիեզերքի հեռաւոր տարածքներէն կամ ովկիանոսներէն անդին գտնուող մեծապետականներ, վաշխառապետեր եւ իշխանատէրեր, միշտ իրենց հայեացքները յառած կ'ըլլան կամ ախորժակները բացած, դէպի այն երկիրները, որոնցմէ կրնան օգտուիլ կամ շահոյթներ ապահովել, հետեւաբար, փորձելով զանոնք մտրակել ու մկրատել, ճանկել ու խարազանել, ամենէն ստորին ու պիղծ միջոցներով:

Արաբական որոշ յեղյեղուկ, հեշտասէր ու փխրամէտ կողմեր, յաճախ մոռնալով իրենց ակունքներուն կառչած մնալու անաղարտ ժառանգութիւնը, կը շեղին իրենց ուղիէն ու կը դառնան հետեւորդն ու կրկնողը այն ուժերուն, որոնք ոչ միայն կը դարպասեն իրենց երկիրները, այլեւ՝ խրամատներ կը բանան իրենց կեանքէն ներս:

Մինչ ուրիշ արաբական կողմեր, անդրդուելի, անխախտ եւ անյողդող, կը մնան իրենց հարազատ աւանդոյթներուն եւ ոչ միայն կը հակառակին արտաքին ազդեցութիւններուն, այլեւ, ի հարկին, կը պայքարին անձանօթ ճնշումներուն դէմ:



Իսկ այս բոլորը ի՞նչ կրնան ստեղծել եւ ո՞ր կ'առաջնորդեն խնդրոյ առարկայ երկիրները, ա՛յս պարագաներուն, Միջին Արեւելքը, որ վերջին տարիներուն միշտ ալ գտնուեցաւ բռնկող լաւաներու մէջ, իր ծանրակշիռ հետեւանքներով ու բոցավառութիւններով, խոր մտահոգութիւններու դուռ բանալով ամենուրեք:

Տարակոյս չկայ, որ տիրող մթնոլորտը ապակայունացնող, ալեկոծող, մրոտող եւ աղարտող կողմեր, իրենց անբարոյութեամբ, անպատկառութեամբ ու լրբութեամբ, հետամուտ են Արաբական աշխարհը «շուռ տալու» իր ձեւաչափերով ու կարգուսարքերով, իրենց խամաճիկը դարձնելով զանոնք, ապա, շահագործելով անոնց իրաւունքները, ճզմելով անոնց արժանապատուութիւնը, որպէսզի անոնք դառնան հլու-հնազանդ իրենց... խաղալիքները:

Իսկ ո՞վքեր կրնային նման տխուր աճպարարութիւններով եւ աղիտաբեր արկածախնդրութիւններով զբաղիլ, եթէ ոչ այն «պատուհաս»ը, որ կը կոչուի Իսրայէլ եւ այն «գերպարագլուխ»ը, որ կը յորջորջուի Ամերիկայի Միացեալ Նահանգներ:

Ահաւասիկ երկու զիրար ամբողջացնող սեւգօտեայ առանցքներ, որոնք ինչպէս միշտ, կը շարունակեն շրջակայքի արաբական հանրապետութիւնները թիրախաւորել, իբր թէ զանոնք ձերբագատելով ահաբեկիչներէ ու դիմադրական շարժումներէ, սակայն, խորքին մէջ, անոնցմէ իւրաքանչիւրը իր գերկայութեամբ եւ ազատագործութեամբ կը շարժի, մէկը իր բացարձակատիրութեամբ, իսկ միւսը՝ իր սանձարձակատիրութեամբ:

Քառսը այս հանգրուաններէն սկսած է եւ այս ոճրափործութեամբ կը շարունակուի, որովհետեւ, այս գոյգը, քաջ գիտակցելով որ ոչ մէկ ուժ կրնայ կասեցնել զինք, անարգել կը մոլտայ ու կը մոնչէ հասնելու համար պոտորաթոյն նպատակներուն:

Նման ցեխոտ ու տղմոտ երթուղիով, աշխարհի մարդկութիւնը, այս շրջանին թէ այլ ափերու մէջ, ինչպէ՞ս կրնայ արժանապատիւ կեանք մը վարել, ո՞ր կրնայ ինքզինք պաշտպանել եւ ինչո՞վ կրնայ հպարտանալ:

Աւելին, վերջին անարգ եւ անողոք պատերազմները, Կազայի ու Լիբանանի դէմ, ի՞նչ կը ցուցանէ, ի լուր բարբարոսութեանց ու ցեղասպանութեան գազաթնակետային ոճրային արշաւանքներուն, որոնց ականատեսը եղաւ (թէ՞ ոչ), կրթեալ Եւրոպան, Քրիստոնէա՛յ Արեւմուտքը, իբրեւ ականատեսներ, բայց, շատ աւելի անբարոյութեամբ, երբ երախաներ, կուրօրէն թէ գիտակօրէն անճիտուեցան, խողխողուեցան ու սպաննուեցան, մինչ՝ «պատուհասող» անհունօրէն վայելեց տեսարանները, իսկ «գերպարագլուխ»ը՝ ըմբռնեց անմարդկային սպանդը:

Ներկայիս, կ'ըսուի թէ՛ զինադադար է, համաձայնութիւն կայ չշարունակելու գրոհները, բայց, ատկէ աւելի մեծ ՍՈՒՏ ու ՍՈՒՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ անհեթեթութիւն չէ՞ն, երբ ամէն օր կայ բռնագրաւում, քանդում ու զոհ, լիբանանան բանակն իսկ առնելով աքցանի տակ, որովհետեւ, զիշատիչ եւ աւերիչ ոսոխը, առանց խպնելու, կը շարունակէ ամէն ինչ իր կամակայութեան ծառայեցնել:

Որովհետեւ նոյն Ամերիկան եւ Արեւմուտքը, ձախաւեր պոռոտախօսներ, խաբեբայ մունետիկներ, սնապարծ դատարկապորտներ, կը մնան նոյն պարտուողականները եւ սնանկները:

Արդեօք անակնկալ՝ էր կամ տարօրինակ, որ յանկարծ Մուրիոյ թղթածրարը դարձեալ հրապարակ նետուեցաւ եւ, պէտք չէ զարմանալ, որ անոր ետին չկար պատահականութիւն, այլ՝ հիմնովին սերտուած եւ ուսումնասիրուած «թատերախաղութիւն» մը, ընթացիկ առասպելի հերոսներով ու կերպարներով, որովհետեւ

Գործող վարչակարգը տապալուած էր, իշխանութիւնը փախուստ տուած, իսկ անոնց տեղ եկած էր «ընդդիմադիրներու» հսկայական բանակ մը, որ առանց արիւնահեղութեան եւ



առանց զգալի ընդհարումներու, գրաւեց համարեա բոլոր կողմերը, ինչպէս նաեւ բազմեցաւ նախագահական պալատին մէջ:

Խորհրդաւորութիւնը, բացայայտ թէ ոչ, ինքնին յուշել կու տայ, թէ այս արագութեամբ ու հեզասահութեամբ մուտք գործել երկիր մը եւ արժանանալ արաբ թէ արտաքին պետութիւններու զօրակցութեան, շատերու համար, աւելի քան զարմանալի էր, որովհետեւ նոր «իշխանութիւնը» եւ անոր պատասխանատուները, (գոնէ մաս մը), երբեք քաղաքական ասպարէզներուն մէջ յայտնի չէին, բայց, ծանօթ էին իրենց դիմադրական բիրտ շարժումներով:

Ասիկա յիշեցնել կու տայ նաեւ, Ամերիկայի դերը (որ արդէն միշտ այքառու է իր տարօրինակութիւններով եւ անհարթութիւններով), երբ զինեց ու զօրակցեցաւ Պըն Լատէնի նման անուանի զինապետի մը ահաբեկչութիւններուն Աֆղանիստանի մէջ, իսկ յետագային, երբ «հաշի»ները փոխուած էին, դարձաւ անոր բուն հակառակորդներէն, մինչեւ որ, ի վերջոյ, գայն անխնաօրէն զգեսնեց:

Պատկերը հոս ալ նոյնն է, բայց, ի՞նչ ընթացքով եւ արդիւնքով, ժամանակները կ'որոշեն, որովհետեւ, Սուրիան եթէ նոր «իշխանութիւն» ունեցաւ, ատոր մասնակից դարձաւ նաեւ Թուրքիան, որ ինչպէս միշտ, պատրաստ է «հարուստ ու համով» պատառները լափելու, իսկ Սուրիոյ պարագային, ատոնք որքա՛ն շատ են եւ արժէքաւոր:

Իսկ Իսրայէլը, որ այս տեսարանին մէջ, իր յստակ ու հսկայ դերակատարութիւնը ունի, արդէն պատրաստ է «նուաճելու» Սուրիան (գէթ մինչեւ Դամասկոսը), այն հեռանկարով, որ ատիկա իր «իրաւունքը» պիտի ըլլայ եւ ինք անոր «տիրակալ»ը:

Ինչպէս վերը կ'անկարկէի, ահա ա՛յս է այն տխրահռչակութիւնը, զոր կը փորձեն (եւ մինչեւ հիմա յաջողած են) խաղալ գլխաւոր երկու դերակատարները՝ Ամերիկան եւ Իսրայէլը:

Թէ ապագան ի՞նչ վերապահած է Սուրիոյ ճակատագիրին, ցարդ մշուշոտ է, բայց, մէկ բան պարզորոշ է, որ ան կրնայ երբեք անորոշութիւններու մէջ, որոնք չեն կրնար ըլլալ անմեղունակ, այլ՝ նոր փորձութիւններու հաւանականութիւնը ու խայտաբղէտութիւնը պետք չէ գանց ընել, այնքան ատեն, որ օղակները կրնան ըլլալ շատ խիստ ու սեղմ, ճնշող ու վայրագ:

Հայութիւնը արդար սրտատրոփութեամբ կը հետելի Սուրիոյ զարգացումներուն, մանաւանդ սուրիահայութեան ճակատագիրին, որ, առանց այդ ալ, աւելի քան տասը տարի շոնդալից ժամանակներ ապրելէ ետք, այսօր եւս կը դիմակալէ դժխուն պահեր:

Անցնող շուրջ տասը օրերուն, ահաւոր ճակատումներն ու բախումները, որոնք տեղի ունեցան Լաթաքիոյ, Թարթուսի ու շրջակայ տեղամասերուն մէջ, ուր կան հայազգի հայրենակից բնակիչներ, անոնք ապրեցան աննկարագրելի վախազոյ ու սահմոկեցուցիչ արհաւիրքներ, տալով նաեւ զոհեր, իսկ ատոնք կը տագնապեցնեն հայութիւնը, մանաւանդ երբ զինք պաշտպանող ու պատսպարող կողմեր կը բացակային կամ ի վիճակի չեն տէր կանգնելու իր կեանքին եւ ապահովութեան:

Որքան ալ կոչեր եւ յայտարարութիւններ լսուին, թէ ամէն ինչ բարեյաջող պիտի ընթանայ ու վտանգը հեռանայ, ո՛վ կ'երաշխաւորէ զանոնք, երբ մոլուցքային արարքները անզսպելի հունի մէջ են, իսկ նախայարձակները բնաւ զանազանութիւն չեն դնէր անմեղին եւ անտէրին միջեւ, այնքան ատեն որ տիրապետող արհմարտութիւնն է:

Ի տես այս բնագրօսիկ ու վայրենաբարոյ կացութեան, երբ սուրիահայութեան, այս կամ այն հատուածը մնացած է անպաշտպան եւ դարձած՝ թիրախ անզսպելի եւ անսանձելի վարձկաններու վաւաշտութեանց, կը նշանակէ, թէ այդ ալիքները հանդարտելու ու հանգստանալու վիճակի մը մէջ պիտի չգտնուին:



Հոս, իրաւունք կա՞յ թէ ոչ, հարցադրելու ու բարձրաձայնելու, թէ հայրենի պետութիւնը, դեր մը կամ պարտականութիւն մը ունի՞, պաշտպանելու իր «հօտ»երէն մէկը, որ մահուկենաց ճակատագիր կը բոլորէ, իր ամբողջական էութեամբ ու ֆիզիքականութեամբ:

Հայոց պետականութիւնը ինչո՞ւ չի գործածեր իր ՄԱԿ-եան պատկանելիութեան իրաւունքները, ո՞ւր է իր պետական հեղինակութիւնը, ազգային արժանապատուութիւնը, հայրենասիրական դիմագիծը ու ժողովրդասիրութեան հիմունքները, օգնութեան ձեռք երկարելու, առնուազն, վտանգեալ հայրենակիցները փրկելով:

Եթէ մարգպետական ընտրութիւնները գերիվեր են իշխանութեանց համար, ի դէմս մեր ժողովուրդի զաւակներուն փրկութեան եւ անվտանգութեան... մռայլութեան, ասիկա ալ զիտնալու է հայութիւնը, թէ՛ յետոյ ի՞նչ...:

Սուրիահայութիւնը, իր աշխատասիրութեամբ, պարկեշտութեամբ, նուիրուածութեամբ, ողջմտութեամբ, հայրենասիրութեամբ եւ ամբողջականութեամբ, միշտ ալ մնացած է հայրենիքի կողքին, առանց հաշուենկատութեան ւ կողմնակալութեան, հաւատալով հայրենիքի անսասանութեան եւ յաւիտենականութեան, ամէն զնով, առանց սակարկելու, մնալով անոր կենդանի ու ցայտուն սիւներէն մէկը:

Մենք կ'ըմբռնենք, որ ժամանակները բարդ են, վիճակները ծանր, պայմանները վտանգաւոր, բայց, ամէն ոք կ'ուզէ հաւատալ, որ իր երբեմնի ծաղկուն ու կենսունակ «թթխմոր»ային հայագաղութը չի կրնար մնալ... մենակեաց, բոց ու կրակի արանքին մէջ եւ մարդասպաններու անխիղճ դատաստաններու առջեւ:

Եթէ անտարբերութեան ու թուլամորթութեան վարքագիծերը պիտի շարունակեն մնալ տիրապետող, մինչ այնտեղ բուռ մը հայեր կ'ապրին ամեհի ճգնաժամներ եւ օրհասական պահեր, այն ատեն կրնա՞նք ըսել, թէ «մեղքը որո՞ւն վզին է»:

Հայութիւնը ո՛չ շրջանի, ոչ քաղաքական, ոչ քաղաքացիական, ոչ ալ պատերազմական հարցեր լուծելու կամ առաջադրելու յաւակնութիւն ունի, բայց, վստահօրէն, պիտի չվարանի պատրաստակամուելու, զօրակցելու ու նուիրուելու սուրիահայ իր հայրենակիցներուն օժանդակելու, նպաստելու, սատարելու ու պաշտպանելու, վճռակամութեան, սակայն հարցերուն-հարցը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ Ո՞Ր ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ Է ԵՒ Ո՞ՐՔԱՆՈՎ ԳՈՐԾՆԱՄԻՏ Է:

Պրպտելու ու Կշռելու Հետքերով

22/3/2025

(Պէյրութ)

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ՝

ԿՈՉ ԱՐԴԻՆԱԻՏ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ



Հայկական Սփիւռքի կարեւոր մարտահրաւերներէն մէկն է հայրենասիրութիւնը՝ որովհետեւ հայրենասիրութեան զգացումը կամաց կամաց կը չքանայ, իսկ “հպարտ հայ ըլլալու” զգացումը արդէն շատոնց չքացած է: Դարերով հայը իր ժառանգութիւնը պահպանած է ի հեճուկս սարսափելի դժուարութիւններու: Բայց վերջին տասնամեակներուն, նկատելի է



անհանգստացնող երեւոյթ մը՝ հայր սկսած է ղեկավարուիլ ղեկավարներով, որոնց առաջնահերթութիւնները աւելի մօտ են օտարին շահերուն քան մեր ազգին: Ժամանակն է, որ վերականգնենք մեր ժառանգութիւնը, կեանքի կոչենք հայկական արեւելումը, եւ վերականգնենք հայ ըլլալու հպարտութիւնը:

Ժառանգութեան Կտակը

Գարեգին Նժդեհի ոգեշնչող ժառանգութիւնը կը ներկայացնէ զօրեղ եւ օրինակելի ղեկավարում, որ ներկայիս անհրաժեշտ է Սփիւռքի գաղութներուն համար: Որպէս հիմնադիր Յեղակոսն երիտասարդական շարժման ԱՄՆի մէջ, Նժդեհ կենդանացուցած է ազգային հպարտութեան եւ ինքնորոշման ոգին հայ երիտասարդին հոգիին եւ մտքին մէջ: Սակայն անոր տեսլականը չէ սահմանուած միայն վերապրելու գաղափարով, այլ նաեւ գործնականօրէն մասնակցած է հայ մշակութի եւ հայրենասիրութեան վերականգնման աշխատանքին: Անոր անխոնջ ջանքերը մեզի կը յուշեն որ ղեկավարը, որ իսկապէս կը հասկնայ եւ ջատաքովն է հայկական ոգիին, կրնայ զօրաշարժի ենթարկել մեր ժողովրդը, ոգեշնչել մեր երիտասարդութիւնը պահպանելու համար մեր ժառանգութիւնը:

Նոր Ուղղութեան Անհրաժեշտութիւնը

Երկար ժամանակ է արդէն որ Սփիւռքը եւ Հայաստանը կը ղեկավարուին անհատներով, որոնց կապուածութիւններն ու համակրանքները հակուած են օտար տերութիւններու ռուսական, արեւմտեան կամ այլ:

Այդպիսի ղեկավարութիւնը, որ յաճախ աւելի մտահոգուած է աշխարհաքաղաքական խարդաւանքներով քան թէ հայ ժողովուրդի իրական բարօրութեամբ, Սփիւռքն ու համայն հայութիւնը մատնած է մոլորութեան: Այս ղեկավարները, հակառակ իրենց խոստումներուն, ճառերուն, գրութիւններուն, չեն վերակենդանացուցած ազգային գիտակցութիւնը եւ հայրենասիրութիւնը, որոնք հայկական հպարտութեան անկիւնաքարերն են: Փոխարէնը, անոնք յաճախ նօսրացուցած են մեր իւրայատուկ ինքնութիւնը, պատճառ դառնալով շատերուն իրենց պորտակապը կտրելու հայկական ինքնութեան հետ:

Հայրենասիրական Ոգիի Վերականգնում

Հայրենասիրութիւնը վերականգնելը շատ աւելին է, քան պարզապէս մեր պատմութիւնը իմանալը կամ անորմով հպարտանալը: Հայրենասիրութիւն կը նշանակէ կրկին հաստատել մեր ազգային ինքնութիւնը արագ փոխուող աշխարհին մէջ: Այս կը պահանջէ վերանայիլ մեր արդի պատմութեան, մեր լեզուին եւ մեր մշակութային արանդոյթներուն, ապա այդ տարրերը նորոգուած ուժով ներկայացնել երիտասարդ սերունդին: Երբ Սփիւռքը կրկին կապ կը հաստատէ իր արմատներուն՝ հայրենիքին հետ եւ ուժ կը ստանայ անկէ: Հայկական մշակոյթը, արուեստը եւ գրականութիւնը միշտ ալ եղած են մեր ամենամեծ խարիսխները: Վերականգնելով հայրենասիրութեան խոր զգացումը, մենք ոչ միայն կը յարգենք մեր նախնիները, այլ նաեւ ամուր հիմերու վրայ կը դնենք մեր ապագան:

Կոչ Նոր Մերուտով Ղեկավարման

Հայկական Սփիւռքը կարիք ունի այնպիսի ղեկավարներու, որոնք չեն վախնար տէր կանգնիլ ժողովուրդին, որոնք հայութեան կարիքներն ու ձգտումները առաջնահերթ կը դասեն օտարներու կամ անձնական շահերէն: Գարեգին Նժդեհի նման ղեկավարները,



որոնք հայրենասիրութեան վերականգնումը յստակ տեսլականով կը ներկայացնեն, պէտք է օրինակ հանդիսանան բոլորին: Ժամանակն է նոր դեկլարութեան՝ որոնք ունին տեսլական, կրնան հասկնալ եւ խուսանաւել ժամանակակից քաղաքական բարդ իրավիճակներու մէջ, միաժամանակ կենդանի պահելով հայկական ոգին: Անհրաժեշտ է որ նոր դեկլարութիւնը խթանէ միասնութիւնը, ոգեշնչէ մշակութային եւ կրթական նախաձեռնութիւններ եւ գործնականապէս մասնակցի մեր ինքնութեան պահպանման Հայաստան աշխարհէն մինչեւ Սփիւռք:

Եզրակացութիւն

Հայրենասիրութեան վերականգնումը պարզապէս իտեալ չէ՝ անհկա մեր մշակութային եւ ազգային ինքնութեան պահպանման համար անժամանցելի հրամայական է: Հայկական Սփիւռքը պէտք է արթննայ ի տես իսկական դեկլարութեան, այնպիսի դեկլարութիւն, որ կը յարգէ մեր պատմութիւնը, կը հասկնայ մեր պայքարի հիմնական իմաստն ու նպատակը, տեսլական ունի, որով պիտի առաջնորդէ Սփիւռքը դէպի այն ապագան, ուր հայկական ինքնութիւնն ու հպարտութիւնը անգամ մը եւս պիտի ճառագայթէ: Միայն այդ ոգիի վերականգնման միջոցով կրնանք վստահ ըլլալ, որ ապագայ սերունդները պիտի շարունակեն վայելել եւ պահպանել մեր ազգային ժառանգութիւնը: Ժամանակն է ձեռքազատուիլ արտաքին ազդեցութիւններէն եւ օտարամտութենէն եւ ընդունիլ ինքնուրոյն հայամտութիւնը: Գարեգին Նժդեհի ոգին, որպէս ուղեցոյց, ցոյց կուտայ, որ հայկական ինքնութեան վերականգնումը ոչ թէ միայն կարելի է, այլ անխուսափելի հրամայական է:

Յակոբ Յակոբեան

ՓՄՇԻՆԵԱՆԻ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒՆ

Յարութ Սասունեան



www.TheCaliforniaCourier.com

Այս շաբաթ գիտցայ, որ Հայաստանի կառավարութիւնը 7,5 միլիոն դրամ (մօտ 19 հազար տոլար) ծախսած է ճամբորդութեան, կէցութեան եւ սնունդին համար տասը թուրք լրագրողներու, որոնք Երեւան հրաւիրուած էին վարչապետ Նիկոլ Փաշինեանին հետ հարցազրոյց կատարելու համար: Բարեբախտաբար ասիկա մեծ գումար չէ, սակայն անոնց ծախսերը հոգալը լրագրողական բարոյագիտութեան խախտում է:

Ես նաեւ տեղեկացայ, որ հարցազրոյցէն առաջ վարչապետին օգնականները գրաւած են թուրք լրագրողներուն բջիջային հեռաձայններն ու նկարահանման գործիքները, որպէսզի անոնք չկարենան ձայնագրել հարցազրոյցը: Ձայնագրութիւնը կատարուած է միմիայն վարչապետին գրասենեակին կողմէ: Ասիկա լրագրողներու հետ վարուելու շատ անսովոր եւ անընդունելի ձեւ է:



Հետաքրքրական է, որ թուրք լրագրող Ֆարհաթ Պորաթաւը նշած է, որ՝ «Տաղաւարները (Երեւանի օդակայանին մէջ), ուր նստած էին հայ ոստիկանները, բերուած են Թուրքիայէն՝ Վրաստանի տարածքով»:

Թուրք լրագրողը հետաքրքրուեցաւ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Փաշինեանի յաճախակի մեկնաբանութիւններով: Ան հարցուց. «Կ'ուզեմ, որ անդրադառնայիք այս թեմային ուշադրութիւն դարձնելու պատճառներուն: Ինչի՞ կ'ուզէք հասնիլ այս ձեւով՝ թէ՛ այստեղի ձեր քաղաքացիներու, թէ՛ սփիւռքի շրջանակներուն մէջ»:

Փաշինեան պատասխանեց. «Իմ ընկալումն այն է, որ պատմութեան մեր դասերը մենք պէտք է ծառայեցնենք այսօրուայ մեր պետութեան՝ Հայաստանի Հանրապետութեան պետութեան շահերին, պետական շահերին եւ ապագայի շահերին: Եւ ի միջի այլոց, իմ ընկալմամբ, այս խօսակցութիւնը հասունացած է ե՛ւ Հայաստանում ե՛ւ սփիւռքում ... ոչ միայն ներհայաստանեան կամ հայերի միջավայրում, այլեւ՝ տարածաշրջանային առումով, որովհետեւ դա էլ է հարց: Պատմութիւնը ինչի՞ համար ենք օգտագործում, որ պատմական *կոնֆրոնտացիաները* (առճակատումները) դառնան յաւիտենական, թէ՛ պատմական *կոնֆրոնտացիաները* մեզ համար ուղերձ են՝ խաղաղ, համագործակցուած, տարածաշրջանային իմաստով կայուն ապագայ կառուցելու համար: Ես այս երկրորդ ընկալման կողմնակից եմ»:

Այլ թուրք լրագրող մը հարցուց. «Դուք կ'օգտագործէք «internal armenization of genocide» (ցեղասպանութեան ներքին հայացում): Կ'ուզեմ գիտնալ, թէ Ցեղասպանութեան հարցը հիմա ինչպիսի՞ ազդեցութիւն ունի Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններուն մէջ: Ըստ ձեզի, ատիկա արդէն նախկին, անցած փուլ է, անցեալի մէջ մնացած հարց է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու առումով: Եւ Հայաստան նախապէս, ինչպէս գիտենք, կը վարէր քաղաքականութիւն, որպէսզի Ցեղասպանութիւնը ընդունուի տարբեր երկիրներու խորհրդարաններուն կողմէ եւ այլն: Կրնա՞նք ըսել, որ այս քաղաքականութիւնը արդէն պիտի չկիրարկուի: Նոյն ձեւով, ձեր սահմանադրութեան ներածական մասին մէջ կան բաժիններ, ուր տեղ գտած են Արեւմտեան Հայաստան եւ Ցեղասպանութիւն արտայայտութիւնները: Եթէ սահմանադրութիւնը փոխուի ձեր երկրին մէջ, անոնք տեղ պիտի չգիտնեն՝ նոր սահմանադրութեան մէջ»:

Փաշինեան պատասխանեց. «Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը մեր արտաքին քաղաքական առաջնահերթութիւնների մէջ չի մտնում այսօր»: Այդուհանդերձ, ան աւելցուց՝ առանց օգտագործելու ցեղասպանութիւն եզրը. «Հայաստանում եւ հայութեան շրջանում դա անառարկելի ճշմարտութիւն է: Այսինքն ուղղակի մեր իրականութեան մէջ հնարաւոր չէ դա կամ ժխտել, կամ ուրանալ, որովհետեւ դա բոլորիս համար անուրանալի ճշմարտութիւն է, բայց խօսքը դրա մասին չէ»: Բայց եւ այնպէս, ան նուազագոյնի հասցուց Ցեղասպանութեան ճանաչման նշանակութիւնը՝ ըսելով, որ երբ հեռաւոր երկիրներ նման որոշում կու տան, երբ ոգեւորութիւնը կը մարի, յաջորդ պահուն հարցում մը կը ծագի՝ «Իսկ այդ որոշումն ի՞նչ է մեզ տալիս մեր անմիջական միջավայրի հետ մեր յարաբերութիւններում: Երբ մենք անմիջական միջավայրում ունենում ենք լարումներ, այդ լարումներն ինչքանով են նպաստում մեր երկրում, մեր տարածաշրջանում կայունութեանը, խաղաղութեանը եւ այլն, եւ այսպէս՝ շարունակ»:

Իր 90 վայրկեան տեւած հարցազրոյցի ամբողջ տեւողութեան Փաշինեան միայն մէկ անգամ օգտագործեց ցեղասպանութիւն եզրը, մինչդէռ թուրք լրագրողը իր հարցումին մէջ չորս անգամ օգտագործեց ցեղասպանութիւն եզրը: Մնացեալ ժամանակին ընթացքին Փաշինեան



ցեղասպանութիւնը անուանեց «որոշում» (6 անգամ), «անիկա» (3 անգամ), «պատմութիւն» (39 անգամ), «մեծ ողբերգութիւն» (մէկ անգամ):

Փաշինեան սխալեցաւ, երբ ըսաւ, որ՝ «Այն ժամանակաշրջանը, երբ տեղի է ունեցել այդ մեծ ողբերգութիւնը, եղել է մի ժամանակաշրջան, երբ չի եղել Հայաստանի Հանրապետութիւն»։ Հայաստանի վարչապետը կարծես չի գիտեր, որ Հայոց ցեղասպանութիւնը տեւած է 1915-1923 թուականներուն, այդ ընթացքին՝ 1918-1920 թուականներուն, գոյութիւն ունեցած է անկախ Հայաստանի Հանրապետութիւնը։

Շատ հիասթափեցնող էր նաեւ Փաշինեանի այն հարցումը, թէ ի՞նչ տուաւ մեզի հեռաւոր երկիրներու կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը։ Ան պետք է գիտնայ, որ եթէ չըլլար սփիւռքի տասնամեակներու ձգտումը Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման համար, աշխարհի մէջ ոչ ոք ցարդ կը յիշէր, որ գործուած է նման ցեղասպանութիւն, բան մը, որմէ շատ գոհ պիտի ըլլար թրքական կառավարութիւնը։ Ճանաչումէն անդին, օր մը, երբ Հայաստանի մէջ ազգային իշխանութիւն ըլլայ եւ միջազգային համապատասխան հանգամանքներ ստեղծուին, հայերը հետամուտ պիտի ըլլան փոխհատուցում ստանալու Ցեղասպանութենէն իրենց կրած կորուստներուն համար, ներառեալ՝ բռնագրաւուած հայկական ունեցումաձքը եւ բռնազաւթուած տարածքները։

Փաշինեան շարունակեց՝ ըսելով, որ Հայաստան հիմնականօրէն պետք է խաղաղութիւն հաստատէ իր անմիջական դրացիներուն հետ, ոչ թէ՝ Աւստրալիոյ, Նոր Զելանտիայի կամ Պրագիլի հետ։ Ան կարծէք չի հասկնար, որ իրական խաղաղութիւնը պետք է հիմնուած ըլլայ պատմական ճշմարտութեան եւ արդարութեան վրայ, ոչ թէ՝ վերաքննութեան (*ռեիզիոնիզմ*) եւ կեղծիքներու վրայ։ Ան շարունակեց, որ Թուրքիան պետք չէ սպառնալիք ըլլայ Հայաստանի համար, ինչպէս Հայաստան պետք չէ սպառնալիք ըլլայ Թուրքիոյ համար։ Վարչապետը, ըստ երեւոյթին, կ'ապրի երեւակայական աշխարհի մէջ։ Համոզուած եմ, որ նախագահ Էրտողան անքուն գիշերներ չ'անցընէր՝ մտահոգուելով, որ Հայաստան կրնայ որեւէ պահու յարձակիլ Թուրքիոյ վրայ։ Ան անհանգստանալու շատ աւելի կարելոր հարցեր ունի։

Փաշինեան շարունակեց ծաղրել պատմական Արեւմտեան Հայաստան հասկացողութիւնը՝ ըսելով, որ Արեւմտեան Հայաստանը ներկայիս Հայաստանի Հանրապետութեան արեւմտեան մասի քաղաքներն են։ Եւ յետոյ, թաքցնելու համար հայկական տարածքներու իր զիջումները, ան կը կատարէ ծիծաղելի յայտարարութիւն, որ այս օրերուն աշխարհագրական սահմաններ չկան՝ շնորհիւ ընկերային ցանցերու եւ համացանցի, որոնք կը հատեն բոլոր սահմանները։

Ինչպէս որ ակնկալելի էր, թուրք լրագրողները անդրադարձան վարչապետին հետ հարցազրոյցին թրքական տեսանկիւնէ՝ ընդգծելով, որ Ցեղասպանութեան հարցին վերաբերեալ Փաշինեանի «հաշտուողական մօտեցումը» եւ Թուրքիայէն տարածքային պահանջներու մերժումը այլեւ խոչընդոտներ չեն հայ-թրքական յարաբերութիւններուն մէջ։ Այնուամենայնիւ, յատկապէս գայթակղեցուցիչ թուրք լրագրող, CNN Turk-ի լրատուական տնօրէն Իտրիս Արքանը, Երեւանի Կապոյտ մզկիթին դիմաց կանգնած, անճշդօրէն յայտարարեց թրքական հեռատեսիլի կայանէն, որ պարսիկներու կառուցած մզկիթ՝ Հայաստանի մայրաքաղաքին մէջ պատմական տեսարժան վայր մը, թրքական է։ Ան նոյնիսկ յանդգնեցաւ Երեւանը նկարագրել իբրեւ պատմական թրքական քաղաք։ Ահա թէ ինչպէ՛ս հատուցեց CNN Turk-ի լրատուական տնօրէնը Փաշինեանին՝ Հայաստան կատարած ամբողջութեամբ վճարուած ուղեւորութեան համար։


25/3/2025

ՏԵՍԱԿԷՏ

ԱՆՈՐՈՇ ԵՒ ՄՏԱՀՈԳԻՉ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»Ը ԻՆՔՆԻՆ ԻՐԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԻՔ ՉԷ՝

21/03/2025

- 21 մարտ, 2025, ԱԶԳ շաբաթաթերթ,



Հայաստանի իշխանությունները այս օրերուն մեծ ակնկալություններ կ'ուզեն վերագրել այն տեղեկատուության, թե՛ Ատրպեյճանի հետ «Խաղաղության պայմանագրի» շարադրությունը վերջնականացած է:

Արդարեւ, պարտութեամբ վերջացած քառասունչորսօրեայ պատերազմէն ետք, անցեալ չորս տարիներուն ընթացքին, Հայաստանի իշխանությունը իբրեւ իր ռազմաքաղաքական գլխաւոր նպատակ կը հետապնդէ, գոնէ իր տեսլականով, Հայաստանի համար իբր խաղաղ եւ հանգիստ շրջան մը ապահովելու երաշխիք Ատրպեյճանի հետ այսպէս կոչուած «Խաղաղության պայմանագրի» մը ստորագրումը:

Այդ չորս տարիներուն ընթացքին վարչապետ Փաշինեանը եւ ՔՊ-ական իր գլխաւոր գործակիցները առանց յուսահատելու ամէն առիթ օգտագործեցին հասնելու համար այդ պայմանագրի վերջնականացման: Միւս կողմէ, սակայն, ընդհակառակը, այս ամբողջ տեւողութեան, պատերազմի յաջողութենէն զինովցած եւ ինքնավստահ Ատրպեյճանը շարունակաբար ցուցադրեց ամբարտաւան եւ արտառոց պահանջներ ու պայմաններ՝ ուղղուած Հայաստանին, իր բոլոր յայտարարութեանց ընթացքին:

Այս սանձարձակ ամբարտաւանութեան գագաթնակէտը կը կայանայ տակաւին մինչեւ այսօր՝ Ատրպեյճանի պետական բարձրագոյն դիրքերու վրայ գտնուող անձնաւորութեանց կողմէ ամբողջ Հայաստանը «Արեւմտեան Ատրպեյճան» անուանելը:



Այս պայմաններուն տակ է որ անցնող օրերուն ընթացքին Հայաստանի եւ ապա միջազգային մամուլին մէջ յանկարծ տարածուեցաւ լուրը, թէ Հայաստանը եւ Ատրպէյճանը համաձայնած են «Խաղաղութեան պայմանագրին» պարունակութեան բոլոր կէտերուն շուրջ: Յատկանշական է սակայն, որ մինչ Հայաստանի իշխանութիւնները կը ջանան այս պարագան ներկայացնել որպէս կարելոր իրագործում մը, եւ, նոյնպէս ալ, մինչ եւրոպական, ամերիկեան եւ մերձակայ երկիրները եւս լաւատեսութեամբ կ'արձագանգեն այդ լուրին, միւս կողմէ, սակայն, պայմանագրին ստորագրութեան վայրի եւ թուականի մասին ոչ միայն մինչեւ օրս չկայ որեւէ տեղեկութիւն, այլ նաեւ ու մանաւանդ նոյն ինքն Ատրպէյճանը ոչ մէկ կերպ կ'անդրադառնայ այդ նիւթին: Առաւել եւս՝ տակաւին ամէն օր Ալիեւ կ'արտայայտուի Հայաստանէն նոր զիջումներ պահանջելու լեզուով:

Այս բոլորին դիմաց բոլորովին հասկնալի է, թէ նոյն ինքն հայրենաբնակ մեր ժողովուրդին խոշոր մեծամասնութիւնը մտահոգ եւ թերահաւատ է: Առաւել եւս, յոռետեսութեամբ կը սպասէ, որ նախ իրագեկ դառնայ շեփորուած պայմանագրին ամբողջական բովանդակութեան:

Մփիւռքը իր կարգին՝ կը բաժնէ ընդհանրապէս հայրենի ժողովուրդին յոռետեսութիւնը, նկատի ունենալով այսօրուան իշխանութեան մինչեւ այսօր բազմիցս դրսեւորած պարտողական զիջումներու երթալու գործելակերպը:

Ահա այս պայմաններուն մէջ հասկնալի է, թէ ի պատասխան մեզի ուղղուած հարցումներուն եւ այս կապակցութեամբ մեզմէ ակնկալուած մեր կեցուածքը բացայայտելու պահանջներուն, մենք՝ որպէս գիտակից հայեր, հիմնուելով «Խաղաղութեան պայմանագրին» մասին ցարդ ընդհանուրին հասանելի անկատար տուեալներուն վրայ, մենք եւս կ'արտայայտենք մեր մտահոգութիւնը եւ, առայժմ, յոռետեսութիւնը:

Այս մտահոգութիւնը եւ յոռետեսութիւնը հիմնաւորուած են մանաւանդ առարկայական լրջագոյն մէկ մեծ եւ հիմնական, բացայայտ բացթողումի մը վրայ, որ մինչեւ այսօր, չորս տարիներ ետք, տակաւին ակնյայտ բացակայութիւնն է Հայաստանի պաշտպանական

պատրաստութեան, որ վստահելի կարելորագոյն երաշխիքը պիտի ըլլար որեւէ պայմանագրի մը իսկական տոկունութեան եւ, հետեւաբար, անոր իսկական արժէքին:

Արդարեւ, պատմութիւնը բազմիցս ցոյց տուած է, որ բոլոր ժամանակներու եւ բոլոր վայրերու մէջ որեւէ երկրի մը համար խաղաղութեան ամենաապահով երաշխիքը անոր կատարեալ պատրաստուածութիւնն է իր սեփական ոյժերով ռազմականօրէն դիմագրաւելու որեւէ յարձակում իր սահմաններուն վրայ:

Այդպիսի պատրաստութեան բացակայութեան պայմաններուն մէջ, դժբախտաբար, թուղթ եւ ստորագրութիւն կ'արժեն միայն այնքան՝ որքան կ'արժեն այդ թուղթը եւ այդ ստորագրութեան մելանը:

ԴՈԿՏ. ԱՐՇԱԻԻՐ ԿԷՕՆՃԵԱՆ

Order of Canada շքանշանակիր

«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ»

ԲԱՅՑ ՆԱԽ՝ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Պարոյր Յ. Աղպաշեան



Հայաստանի իշխանութիւնները, անգուսպ հեւքի մէջ են, իրենց հասկացողութեամբ ու դիտարկումով, շահաւէտութեամբ եւ արդիւնաբերութեամբ, «խաղաղութեան համաձայնագիր» ստորագրելու եւրոպական կամ արեւմտեան աղբիւրներու հետ:

Բացայայտ է, որ անոնք շուար-մոլոր ոլորապտոյտի մէջ են եւ չեն գիտեր (կամ արդեօ՞ք գիտեն), որ այդ համաձայնագիրը կամ պայմանագիրը, ո՞րքան ուժական ու կառուցողական կրնայ ըլլալ Հայաստանին համար:

Այս պարագային, հարց կը ծագի, որ Հայաստանի իշխանութեանց խորհրդատուները ու գործակիցները, որո՞նք են եւ ո՞րքանով անկեղծ ու պարկեշտ են՝ լրիւ եւ ամբողջական ծրարով մը, անոր զօրավիզ կանգնելու ու դառնալու մնայուն դաշնակից:



Մնաց որ, այսօրուան դրութեամբ, նոյն իշխանութիւնները, արդեօք ունի՞ն փորձագիտութեան ու ճանաչողութեան հնարքներ, որոնցմով կրնան, առանց բարդոյթներու նետուիլ այդ փորձադաշտերուն մէջ, ի դէմս եւրոպական խաղբութիւններուն, ջրիկութիւններուն եւ անհաշտութիւններուն, որոնք, պատմականօրէն, ինչպէս ուրիշներուն, նաեւ հայ ժողովուրդը շահագործած են ու խաբած, թողլքած եւ անտեսած, զայն մատնելով անտիրութիւններու եւ անիրաւութիւններու ամբողջական սեւ ճակատագիրի:

Իսկ եթէ յոյս կը դրուի Ամերիկայի Միացեալ Նահանգներուն վրայ, մանաւանդ՝ այժմու նախագահ Տոլանտ Թրամփին, որուն արտառոց քաղաքականութիւնը սկսած է գլխապտոյտ պատճառել, թէ՛ ամերիկացիներուն, թէ՛ մարդկութեան, անտարակոյս, Հայաստանի իշխանութիւնները միամտութիւնը պէտք չէ ունենան, ոչ ալ փխրուն ակնկալութիւնը, որ Ուաշինկթըն կրնայ դառնալ գործնամիտ եւ անշեղ բարեկամ մը հայութեան:

Եւ ասիկա, հակառակ անոր, որ ամերիկահայութիւնը մեծ կշիռ մը ունի Ամերիկայի բեմահարթակին վրայ, քաղաքական ու տնտեսական մակարդակներով, արդիւնաբերական եւ արտադրական ներդրումներով, քաղաքացիական ու հասարակական նուաճումներով, բայց, յաճախ, մնալով «շուքի» մէջ, որպէս հաւաքականութիւն ու գործօն մարդուծ:

Թրամփի նախորդը՝ Ըօ Պայտըն, որ քաջ կը գիտակցէր այս ճշմարտութեան, գտնուեցաւ դատապարտելի դիտողականութեան դերի մը մէջ, երբ Արցախի շուրջ օղակուած ազերիական շղթաներուն օրօք, ոչինչ ըրաւ, մնաց «արձանացած» վիճակի մէջ, ո՛չ զսպելով կատողած գազանը, ո՛չ ալ օգնելով կարօտեալներուն:

Մնաց որ՝ Հայկական կողմերուն «լաւատես»ները կամ «թրամփական»ները, կարենան օգտուիլ անոր... դիրաբեկ խոստումներէն ու փնտռեն այն ուղիները, որոնցմով կարելի պիտի ըլլայ նպաստաւորուիլ անոնցմէ, պայմանաւ որ անցեալի ու ներկայի նոյն ծուղակներուն մէջ չիյնան եւ չյուսախաբուին:

Ինչ կը վերաբերի Հայաստանի այն գործընկերներուն ու դաշնակիցներուն, որոնք երէկ, իրեն համար անմիջական էին, իսկ այսօր դարձած են՝ «կասկածելի» կամ «օտարոտի» կամ ալ՝ «փոփոխելի», ո՛վ ըսաւ (կամ մղեց) Հայաստանին, որ հրաժարին անոնցմէ, առնուազն, թուլացնեն կապերը եւ իրենց հայեացքները ուղղեն աւելի ապահով ու վստահելի (՞) վայրեր: Շարունակուող այս մակընթացութիւններն ու խարխափումները, որոնք չունին որեւէ ամրակոռ հիմք եւ անհրաժեշտ լիցք, արդեօք ինչպէ՞ս կրնան Հայաստանը դուրս բերել իր ներքին անկայունութիւններէն ու մոլորութիւններէն, դէպի բարօք ապագայ, հանգստաւէտ կեանք, գոհացուցիչ կենցաղ ու խաղաղ գոյավիճակ, որովհետեւ, Հայաստանի իշխանութիւնները, իրենց «ներքին վերքեր»ը ամոքելու համար, որոնումի մէջ են, դրական ելքերով հանդէս գալու, լաւագոյն առանցքը նկատելով (ըստ իրենց), նոր սիւներէ կառչումը, դէպի անձայրածիր կամ անձանօթ տարածքներ հասնելով:

Թէ ո՞րքանով ճիշդ ու համոզիչ են այդ ընտրանքները, ո՞րքանով ընդունելի ու փայփայելի, ո՞րքանով հասանելի եւ ողջունելի, իսկապէս խորհրդածելի է, որովհետեւ, վստահիլ եւ առաջնորդուիլ նման հաւանականութիւններով, նուազագոյնը կանխահաստութիւն ու կարճատեսութիւն են, այնքան ատեն որ՝ դէպի այլ քարափներ ժամանումը, ոչ միայն փորձանաւոր է, այլեւ՝ վտանգաւոր:

Ահաւասիկ այս ծիրերէն ներս, երբ կը փառաբանուի «Խաղաղութեան համաձայնագիր»ի մը մասին (ի շարս այլ խայտաբղէտ գործակցութիւններու), Հայաստանի իշխանութիւնները, որոնք հազար ու մէկ անաւարտ պարտականութիւններ ունին, թերաւարտ պարտաւորութիւններ ու կիսատ-պոստ ծրագիրներ, ներհայաստանեան կարգուսարքը դասաւորելու, կեանքը բարելաւելու ու ժողովուրդին տարրական իրաւունքները հոգալու փոխարէն, կը մոռնան կամ կը կարկտեն այդ բոլորը, յանկարծ յանկերգելով «խաղաղութիւն» ձեռք ձգելու կարելիութեանց մասին:



Անկասկած, այդ խաղաղութիւնը օգտակար ու շինիչ կրնայ ըլլալ, բայց, ո՞ր խաղաղութեան եւ որո՞ւն հետ խաղաղուելու մասին կը գեղգեղուի, երբ Հայաստանը ամէն կողմէ շրջապատուած է հակառակորդներով, անվստահելիներով, անուղաններով, կեղծաւորներով, մէկ խօսքով, անմատչելիներով:

Հետաքրքրական է արձանագրել, որ Հայաստանի իշխանութիւնները ո՞ւր կը փնտռեն խաղաղութիւնը կամ խաղաղասերները.

- Թուրքիո՞յ
- Ատրպէյճանի՞
- Վրաստանի՞
- Պարսկաստանի՞
- Ամերիկայի՞
- Ֆրանսայի՞
- Արեւմուտքի՞
- Թէ՞ ... Զինպապուէի

Այս կամ այլ հաշիւները, ո՞րքանով նկատի առնուած են իշխանութիւններուն կողմէ, որոնք իրենց պճնասիրութեամբ դուռեր կը թակեն, ողորմութիւն հայցելու ու խաղաղութիւն մուրալու նպատակով:

Յամենայնդէպս, ժամանակները ցոյց կու տան այդ բոլորին արդիւնքները, թէ ի՞նչ ընթացք պիտի առնեն եւ ո՞ւր պիտի յանգին, որպէսզի ոչ ոք յուսախաբութեան չմատնուի ու հիասթափութիւն չսպրի:

Այս առիթով, անհրաժեշտ կը նկատեմ անդրադառնալ, կրկնելու գնով, թէ Հայաստանի իշխանութիւնները, բոլորն ալ, առաւել կամ նուազ չափերով, իրենց քաղաքական ոճերէն, ու գործարքներէն, արեւելումներէն ու վճիռներէն, հիմնովին հեռու կը պահեն զանգուածները, ընդհուպ՝ իրենց ժողովուրդը, ամէն ինչ ծածուկ, քողարկեալ կամ թաքնուած նկատելով, որպէս իրենց անձնական գաղտնիքները:

Եթէ ա՛յս է ժողովրդավարութեան սկզբունքը, այսպէս կը տնօրինուի ու նման կարգով կը կիրարկուի, վա՛յ է եկեր այդ աշխարհագիտութեան, որովհետեւ անիկա միայն չարիք կը բերէ:

Պիտի չուզենք այդ դիտանկիւնով ու տրամաբանութեամբ որակել տիրոջ համակարգը, բայց, երբ կը հետեւինք զարգացումներուն ու հոլովոյթներուն, կարելի՞ է այլ ձեւով մտածել, յատկապէս երբ ունկնդիրը կը դառնանք ժողովուրդին մեծամասնութեան դժգոհութիւններուն, սրտնեղութիւններուն, տրտնջանքներուն, բողոքներուն, ցասումներուն, որոնք հասած են ահաւոր ու ճգնաժամային պտոթկումներու:

Ուղղակի ապշիլ պէտք է, որ իշխանութիւն մը, ինչպէ՛ս կրնայ ինքզինք իր ժողովուրդէն այսքան հեռու պահել, ինչպիսի՞ ոխ կայ երկուքին միջեւ, ինչպէ՛ս մէկը չի կրնար հանդուրժել միւսը:

Ուշագրաւ է, որ՝ մինչ գործող իշխանութենէն մեծաթիւ տարրեր, կոշտ եւ անբարեացակամ են, խիստ ու կծու իրենց վերաբերմունքներուն մեջ, ապա, նոյն ծայրայեղութիւնը կայ նաեւ ժողովուրդի լայն խաւերուն մօտ, երբ անզապելի զայրոյթով, բուռն ժայթքումով, անչափելի բռնագրօսիկութեամբ կ'արտայայտուին իշխանաւորներուն դէմ, միշտ տեղին թէ անտեղի անարգանքով, նախատինքով, արհամարհանքով, նոյնիսկ անվայել բառամթերքով, ինչ որ ցոյց կու տայ թէ հակադրութիւնները ո՞ր աստիճանի հասած են:

Արդեօք այս սայթաքումները եւ անճոռնիութիւնները չէ՞ն նկատուիր իշխանութեան կողմէ, եթէ ո՛չ, աս ալ անզգամութեան հիւանդագին հակուրութիւն է, իսկ եթէ այո՛, աս ալ գիտակցուած ուրիշ ախտավարակութիւն մըն է:



Իսկ նման վարկածներ, որոն կը վնասեն, կը հարուածեն, եթէ ոչ, հաւասարապէս, թէ՛ իշխանութեան, թէ՛ ժողովուրդին, որոնցմէ իւրաքանչիւրը կարծես թէ կ'ապրի տարբեր մոլորակի մը մէջ, հակադիր բեւեռներու վրայ, իսկ կոխկոտուողն ու ճզմուողը, միթէ՞ չըլլար Հայաստանը, իր բազմաթիւ թելերով, ուղղութիւններով եւ հեղինակութիւններով:

Խաղաղութիւն փնտռողն ու հետապնդողը, անշուշտ, ճիշդ ուղիի վրայ կրնայ գտնուիլ, բայց, այդ ճիշդը ըլլալու համար առարկայական եւ իրապաշտական բարեբեր ու շնորհաբեր, օղի ու ջուրի նման կարիքը ունի, կրկնակի, երկակի ու բամարկի ծնունդներու ու վերածնունդներու, որոնք ոչ միայն կը վերյիշեցնեն մեր պայծառ ու հպարտառիթ անցեալը, այլեւ՝ դէպի ապագան նայող եւ յուշող խոստմնալի բերքերն եւ արգասիքները:

Միշտ պէտք է յիշել եւ յիշեցնել, որ հայ ժողովուրդը, իր հարուստ բարեմասնութիւններով, ճոխ հնարամտութիւններով, բազմասեռ ստեղծագործութիւններով, պատուաբեր յառաջդիմութիւններով, Ոսկեղնիկ լեզուով, նախանձելի արուեստներով, կը մնայ անզուգականութիւն մը, որուն գնահատանքը ե՛ւ արժեւորումը, նոյնիսկ չէ վրիպած (ու չի վրիպիր), լայնախոհ օտարներու ուշադրութենէն:

Հետեւաբար, եթէ մենք կրողն ենք այդ արժեքաւոր գանձերուն եւ ժառանգորդը այդ բիրեղեայ ջքնադութիւններուն, ներելի չէ որ նոր Հայաստանը չըմբռնէ զանոնք ու համապատասխան նրբութեամբ չվերաբերի անոնց հետ, յանուն հայրենիքի յաւիտենականութեան ու հայ ժողովուրդի անասանութեան:

Ահա թէ ինչո՞ւ, մեր ճիտին պարտքն է, իբրեւ դիտորդ ու հետեւորդ հայրենի իրականութեան, երբեք չըրջանցել տեղի ունեցող իրադարձութիւնները, ներքին թէ արտաքին ճակատներու վրայ, ի հարկին, որոշ կշռադատումներով անդրադառնալով անոնց, նպատակաւսաց ու տեղին հպումներով:

Փաստ ըլլալէ չի դադրիր, որ անցնող տարիներուն, առիթ չփախցուեցաւ լուսարձակի տակ առնելու այն դժկամակելի երեւոյթները, որոնք կը մտահոգեն հայութիւնը, հետեւաբար անոնց արձագանգելը, իրենց ժխտական (թէ դրական) երեսներով, հիմա՛, աւելի քան երբեք անհրաժեշտութիւն են:

Իսկ ներկայիս, ամէն ժամանակէ աւելի հրամայական է մնալ արթուն ու զգաստ, աչալուրջ ու հետեւողական, որ ամէն ինչ, կարելի բժախնդրութեամբ ու ժրաջանութեամբ, հայկական գնացքը ճիշդ ուղղութեամբ շարժի, ճիշդ ճամբորդներով ու ճիշդ հեռանկարներով:

Ինչ խօսք որ, աւելի քան ուշացած ենք, բայց, այլեւս ժամանակն է, որ Հայաստանը դուրս գայ իր թմբիւրէն, պետական-աւագանիական միակողմանիական բարդոյթէն ու ձեւաւորուի ու չափաւորուի այն երանգներուն հետ, որոնք ժողովուրդին բարօրութիւնը, բարեկեցութիւնն ու համատեղութիւնը կը կազմեն, յետոյ մտածելով, համախմբօրէն, թէ խաղաղութիւնը ուրկէ՞ կը սկսի եւ ինչպէ՞ ս կ'իրականանայ:

«Պրպտելու ու Կշռելու Հետքերով» Շարքէն:

6/4/2025

(Պէյրութ)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՐԻ ԵՒ ԱՆՈՐ ՏԷՐ ԱԶԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԵԼԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ...

Հռոմէն առաջ, Բաբելոնի օրերուն ալ, կար երկիր՝ Նայիրի կամ Հայաստան, Արմենիա: Աստուածաշունչը Նոյեան Տապանը հոն բերած է, Արարատի վրայ, ան հոն տնկած է խաղողի այգի: Հոն ապրող ժողովուրդը կը կոչուէր **Հայ** կամ **Արմէն**: Կը սիրենք ըսել նաեւ **Նայիրիցի**: Պատմաբանները թող որոշեն: Այդ երկիրը եւ ժողովուրդը ունեցած են պատմութիւն, ընդգրկուած են յունահռոմէական քրիստոնէայ համաստեղութեան եւ մշակոյթին մէջ: Ներխուժումներ դիմագրաւած են, եւ հակառակ կարգի չարիքներու,

դիմացած են: Հասած են մինչեւ մեր օրերը, ենթակայ եղած են նուաճողներու եւ կայսրութիւններու ծաւալապաշտական յարձակումներուն, որոնք կանգ չեն առած, ըսենք նաեւ, որ իրենք հայերը անոնց առաջը չեն կրցած առնել:



Երէկ եւ այսօր, Հայաստան կոչուած երկիրը եւ անոր ժողովուրդը կանգնած էին եւ կանգնած են գոյութենական ահեղ խնդրի առջեւ: Ինչ որ այսօր **Հայաստան** անուան տակ կը ներկայանայ, **նախահայրերու կտակ Հայրենիքի բեկորն է:** Այս իրողութիւնը, հայր ուր ալ գտնուի, մտահան պէտք չէ ընէ: Այդ կտակ Երկիրը հիւսած է մեր ինքնութիւնը, ազգային գիտակցութիւնը, եթէ, չենք այլացած համաշխարհայնացման միգամածին մէջ: Ծաւալապաշտութիւնները, անուն փոխելով, կը

սպառնան եւ սպառնացած են անոր գոյութեան: Այս դուրսէն դիտուած հաստատում է: Պատմաբանները կրնան զանազան մեկնաբանութիւններով պատկերացնել կացութիւնը կամ իրողութիւնը, գրել պատմութիւն, իսկ քաղաքագետները՝ զձեւ քարտէսներ, ոտնատակ ընելով իրաւունք, արդարութիւն, սկզբունք, միաժամանակ փուճ բարոյականութիւն քարոզելով:

Եթէ ուշ չէ, որ հայերը իրենք, իրենց ղեկավարութիւնները, անոնք ըլլան քաղաքական, կրօնական, մտաւորական թէ տնտեսական, հարց պէտք է տան, **թէ ո՞ւր հասած են ազգը եւ հայրենիքը, իրենք ո՞ւր հասցուցած են զանոնք, ի՞նչպիսի ապագայ նախատեսած են անոնց համար:** Կրնայի՞նք հոս չհասնիլ, ինչպէ՞ս, կրնա՞նք հոն չմնալ, եւ գիտնալ՝ **թէ ի՞նչ կ'ըլլանք եթէ հոն մնանք:**

Թշնամիներու դէմ ինչո՞ւ ճակատ չենք եղած եւ տեւաբար ինչո՞ւ պարտուած ենք: Ինչո՞ւ ճակատ չենք այսօր ալ: Վերականգնելու եւ պատմութեան լպրծուն տարածքին վրայ չմնալու եւ հուսկ չանհետանելու համար, այս ըմբռնումով **քննադատութիւնը եւ ինքնաքննադատութիւնը** այսօ՞ր պէտք է ընել եւ ըստ այնմ **գործել, ղեկավարել եւ ղեկավարուիլ:** Այս պէտք է ընել ո՛չ թէ անհատական, թաղային, խմբակային եւ ազգէն հեռու եւ հեռացած սովորութիւն դարձած յաւելեալ իրաւունքներու եւ դիրքերու եւ զանոնք պաշտպանելու համար, այլ՝ **ազգի եւ հայրենիքի հանդէպ յաւելեալ պարտքի:** Եթէ այսօր ուշ չէ արդէն, վաղը վերջնականապէս ուշ պիտի ըլլայ:

Եթէ սկսեինք իրատեսութեամբ ըսել, որ **անհատաբար եւ հաւաքաբար պատասխանատու ենք, սխալած ենք,** մտաւորական եւ ազգային առաքինի քաջութեամբ ընդունեինք ինքնաքննադատութիւն ընել, ընդունիլ սխալ, յանցանք եւ մեղք, եւ բարձրագոյ ըսել, որ ազգը եւ հայրենիքը եւ իրաւունք ունին, այդ հայուն պարտքն է եւ պարտականութիւնն է, ան չի մասնատուիր ըստ անհատական կամ խմբակային շահի եւ նկատումի, ան ըլլայ թաղային, թէ այս կամ այն ձեւով՝ դասակարգային: Այդ իրաւունքի հետապնդումը եւ իրականացումը կ'երաշխաւորեն ինքնատիպ եւ ինքնուրոյն ազգի եւ անոր հայրենիքի գոյութիւնը:

Իրատեսութեամբ հարկ է ընդունիլ, որ պարտուած ենք եւ կը շարունակենք պարտուիլ, այսպէս ալ պիտի շարունակուի, եթէ, մեր **եսերը աղբաման չղնենք** եւ առանց ինքնարդարացման ճապկումներու, պարտութիւններու ախտորոշումը չընենք: Ի՞նչ ըրած



ենք եւ կ'ընենք չպարտուելու համար: Այս ընելու հոգեբարոյական գիտակցութիւն եւ ուժ ունի՞նք, որպէսզի ախտերը դարմանենք եւ անոնցմէ հրաժարինք: Դիւրին է խօսիլ արտաքին թշնամիի եւ թշնամիներու կատարած չարիքներուն մասին: Ի՞նչ ըրած ենք մենք, կամ կրնայինք չընել, որպէսզի հոս հասած չըլլայինք եւ ընդունիլ **մեր յանցանքի բաժինը, եւ** ինչպէս ըսած է Հին Յունաստանի մեծ իմաստասէրը, catharsis ընել, ինքնամաքրում ընել յանցանքի, պարտութեան **եւ** ձախողութեան պատճառները փնտռել մեր մէջ:

Դարերու հնութիւն ունի եւ կոշկոռ դարձած ախտ է, գահի եւ թագի համար կռիւ մղել եւ թշնամի համարել ազգի ՄԻԻՍ անդամը, չենք զբաղած մեր հողին, գոյութեան եւ ինքնութեան սպառնացող արտաքին թշնամիով եւ եղած ենք պարսկասէր, բիւզանդասէր, թրքասէր, ռուսասէր, սովետասէր, բոլոր երանգներով՝ արեւմտասէր, զիրար մերժած ենք, ճակատած ենք իրարու դէմ եւ ինքնաշնորհած ենք **համաշխարհային ազգ** ըլլալու դատարկ միսիթարական տիտղոսը: Եթէ մեր պատմութեան ծանօթ ենք, պէտք է յիշենք հայ Նախարարական Տուները, որոնց առաջնորդները իրենց աչքերը միշտ յառած էին թագին ու գահին, եղած էին իրարու դէմ: Զգուանքով կը յիշեմ, որ փոխանակ պետութիւն եւ գահ պահելու, անոնք **դիմած են Պարսից արքային, որպէսզի գահընկեց ընէ Արշակունի թագաւորը**, անկախ անկէ որ ան լաւ թագաւոր էր թէ վատ: Պարսից Թագաւորը գահընկեց ըրած է հայոց թագաւորը, անոր հետ գացած է հայ թագաւորութիւնը: Եւ ապա ազգը պետութիւն չունեցաւ: Եւ այդպէս ապրեցանք դարեր, ուրիշներու լուծը կրեցինք, անոնք հայուն հայրենիքը իրարու միջեւ որպէս ւաւր բաժնեցին: Եւ հայը ապրեցաւ հայրենիք ունենալու երազանքով, Իսրայէլ Օրի կամ Դաւիթ Բէկ, ստեղծեց Սասունցի Դաւիթի երազը, անհատներ եւ խմբակներ, հեքիաթի նմանող պայքարներ մղեցին, սիրոյ եւ յոյսի մարտեր մղեցին: Բայց **չմիացանք, թէւ միացում երգեցինք եւ կ'երգենք**, շարունակելով իրարու դէմ պայքարիլ, մեր ետերէն անդին չնայելով: Հիւանդագին հին ու նոր տրամաբանութիւնը եղաւ եւ մնաց աթոռ-աթոռակի տիրանալու փառասիրութիւնը: Կը շարունակենք հայրենիք երգել եւ յուզուիլ, երգել՝ Երեւան, Վան Կարս Անի, Դուին, Մուշ, Սասուն, Գետաշէն...: Բայց ինքնամաքրում չըրինք եւ չենք ըներ, կոչ, երգ եւ նախաձեռնութիւններ մնացին յուզում, երազ, մենախօսութիւն, մշակեցինք «բարձրնտիր» ըլլալու վարք ու բարք եւ անոնցմէ դուրս չեկանք:

Ինքնամաքրում ընելու համար հարկ է կառչիլ արժէքներու, կարողութիւններու, գիտութեան, ողջախոհութեան եւ նայիլ գահէ ու թագէ անդին, եւ դառնալ ուժ: Ողջախոհութիւնը իր պարզ բանաձեւումը գտած է անկլօ-սաքտոն **the right man in the right place** իմաստութեան մէջ: Մենք մեզ եւ մեր շրջապատը ճիշդ չգնահատեցինք, Հայ Նախարարական Տուներու ուղիին հետեւեցանք: Եզրակացութիւնը Գեորգ Էմին բանաստեղծի տողերն են, որ ՄԵՆՔ ԳԱՀ ՈՒ ԹԱԳ ՉԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ, ԵՒ ՄՊԱՅ Է ԱՄԷՆ ՄԻ ՀԱՅ: Բանակ չտեսնողը կը ցանկայ ուսադիրներով նկարուիլ, դպրոցի մը վերի կարգերուն աշակերտ ըլլալու պատրաստութիւն չունեցողը կը յայտնուի տնօրէնի պաշտօնին, հայերէն գիր-գրականութիւն չգիտցողը բանաստեղծի յուշահանդէսին բեմ կը բարձրանայ հայերէն էջի մը օտար լեզուի թարգմանութեամբ, քանի որ բանաստեղծը չէ կարելորը, այլ բեմին վրայ շորորալը, ուրիշներ «Ղարաբաղ»ի որպէս պաշտպան հրապարակ կ'ելլեն, ելան, երբ քարտէսի վրայ անոր տեղն անգամ չէին գիտեր, «համահայկական» ժողովներու եկող-գացողներուն, եթէ հարցնէիք թէ ինչո՞ւ եկած էին, կ'ըսէին, թէ նման տեղեր կու գային, որովհետեւ «կը յուզուէին»: Չէ՞ք լսած մի ոմն նորահարուստի խօսքը, թէ «հիմա դրամ եւ ժամանակ ունիմ եւ աթոռ կ'ուզեմ»: Չենք զարմանար, երբ ան այդ աթոռը կ'ունենայ:



Նախարարական Տունները չկան, բայց անոնց տնաւեր աւանդութիւնը կը պահուի: Գահ եւ թագ չկան, կան ՊԱՇՏՕՆՆԵՐ, որոնք թերթերու էջերուն կամ հեռատեսիլէն պատկեր ունենալու ցանկալի պատիւին կ'արժանացնեն:

Եթէ անկեղծ ենք եւ կ'ուզենք ազգ եւ հայրենիք վերականգնել, պէտք է ինքնամաքքում ընենք եւ նուաճենք եւ սխալ եմ եւ դուն իրաւունք ունիս ըսելու հոգեբարոյական մեծութիւն:

Չեմ յիշեր թէ ո՞վ պատմած էր հետեւեալը, գոր իմ կարգիս քանի մը անգամ յիշած եմ: Պոլսոյ մէջ, ԺԹ դարուն, եղած են Պատրիարք ունենալու, ըլլալու եւ ընտրելու երկար պայքարներ: Ընտրած են, եւ հրաժարեցուցած, աւարտին թեկնածու եպիսկոպոս չէ մնացած, ընտրած են գաւառի մէջ գործող վարդապետ մը: Եւ ինչպէս հարկն է, երեւելիներ գացած են շնորհաւորելու նորընտիրը, որ գիտէր թէ Պոլսոյ Պատրիարքարանի ծաղկեայ դահլիճին մէջ կային բոլոր պատրիարքներու մեծադիր պատկերները: Երբ հարց կու տան վարդապետին, թէ երբ Պոլիս երթայ ի նչ պիտի ընէ, ան կը պատասխանէ, գաւառացիի անկեղծութեամբ եւ կ'ըսէ. «Երթամ զիմ պատկեր նկարել»...

Նման պատում չեն լսեր, եւ իրենց անհեթեթութեան չեն անդրադառնար «հիմա աթոռ կ'ուզեմ» ըսողները, «զիմ պատկեր նկարել»ու հետամտողները քանի որ անոնք ամէն բան գիտեն, ընթերցել-լսելու ժամանակ չունին, յաճախ հայերէն խօսքէն եւ գիրէն օտարուած են:

Ընկերային եւ քաղաքական ամբարտաւանութիւն է վստահ ըլլալ սեփական իմաստութեան, չտեսնել **չիմաստութիւնը**, միշտ կը գտնուին պալատականներ եւ ներքինիներ, որոնք վաղ թէ ուշ կ'ըլլան ծառայ: Անոնք չեն առաջնորդուիր այն փրկարար միտքով, ինչպէս ըսած է Կանտին, որ հզօրը կրնայ տկարանալ եւ իմաստունն ալ կրնայ սխալիլ: Երբ ոմանց տակէն վերցուի աթոռը, անոնք կը մնան չոր գետնի վրայ:

Եթէ չենք յաջողիր, եւ կը պարտուինք, պահ մը կանգ պէտք է առնենք եւ մտածենք մեր պատմութեան Հայ նախարարներու մնայուն եւ աւեր գործած գահ եւ թագ ունեալու աւեր գործած քաղաքական ցանկութեան մասին: Եւ յիշել մեզի ժամանակակից Գեորգ Էմին բանաստեղծը: Ան եզրակացուցած է ըսելով, որ «**սպայ է ամէն մի հայ**»... Եթէ «զիմ պատկեր նկարել»ով զբաղած սպաներու բանակ-ազգ ենք ո՞ր պիտի գտնենք զինուոր եւ առաջնորդ: Հայաստան եւ Սփիւռք կ'ունենանք աճպարարութիւն չեղող եւ ազգին համար կենսական կառուցողական ողջախոհութիւն ունեցող իրաւ սպաներ, որոնք գիտնան զինուոր եւ բանակ առաջնորդել, չըլլան իրենք զիրենք եւ հանրութիւն զուարճացնող տիկնիկային թատրոնի բեմին վրայ: Երբ թատրոն վերջ գտնէ եւ վարագոյրը իջնէ, ինքզինք ո՞ր պիտի գտնէ «ամէն մի հայ սպայ» ազգը:

Երէկ, եթէ ունեցած ըլլայինք, այսօր եթէ պճեղ մը իրատեսութիւն ունենանք, նուազ սպաներ եւ աւելի քաջ ու հաւատաւոր զինուորներ ունենանք, մեր վաղը աւելի լաւ կ'ըլլայ:

Պարսից արքան լսեց հայ նախարարները, գահընկեց ըրաւ հայոց Վռամշապուհ թագաւորը եւ մենք թագաւոր չունեցանք: Մեր անմիջական արցախեան պատմութիւնը ի՞նչ կ'ըսէ «յաղթանակէն վերջ պարտութեան» մասին: Անհեթեթ է Քիփիկնկ բանաստեղծին պէս սաւառնիլ եւ ըսել՝ «յաղթանակէն վերջ հանդիպիլ պարտութեան եւ նոյն ձեւով ընդունիլ զոյգն այդ խաբող»... Պարտութիւնը խաբկանք չէ, բանաստեղծութիւն չէ, լեզուագարութիւն չէ, չի վարագուրուիր «զիմ պատկերի նկարահանման լոյսի եւ ստուերի խաղերով»:



Այսպէս է եւ այդպէս կ'ըլլայ, երբ «սպայ է ամէն մի հայ», համացանցի թէ ժողովներու անտիրութեան արեւոյնութեան մէջ: Երեսն, Չանգեզուր, բազմանուն եւ բազմագոյն Սփիւռք, կը մտածենք մեր դիմումով կատարուած հայ թագաւորի գահընկեցութեամբ ասանդուած քաղաքական եւ հոգեբարոյական ԻՄԱՍՍԻ մասին, որ աթոռ-աթոռակի խաղ չեղաւ:

Հանդէս է հայ կեանքը, «ամէն տեղ ուր հայ կայ»ով շնչող երջանիկ սպաներով:

Նախակրթարանի հայերէնի դասագիրքիս մէջ պատմութիւն մը կար: Ընտանիքի մը նահապետը մահամերձ է, որդիներ, թոռներ, հարսներ, հաւաքուած են սնարին: Նահապետը աչքերը կը բանայ եւ կը տեսնէ, որ բոլորը հոն են, եւ կը հարցնէ, որ եթէ բոլորդ հոս էք, ո՞վ կը պահէ ոչխարները կովերը:

Երբ «իմ պատկեր նկարելով» ինքնահաստատում կը փնտռենք, խօսափողով կը բաւարարուինք, քանի որ «սպայ է ամէն մի հայ»... Խաղեր կը սարքենք իրարու դէմ խօսքի նիզակներ կը ձօճենք, ո՞վ ի՞նչ կը պահէ: Նիզակախաղի դաշտը ո՛չ Աւարայր է եւ ո՛չ ալ Մարդարապատ: Ան ինքզինք աճեցնող լրատուամիջոցներու եւ համացանցի հանդէս է ուր կ'արշաւեն «ամէնքն ալ սպայ հայեր» զինուած թղթէ կապարճներով: Մի՛ հարցնէք թէ ի՞նչ կը պահեն, ի՞նչ բանի տիրութիւն կ'ընեն:

Ինչպէ՞ս ինքնամաքրուիլ եւ ազգ եւ հայրենիք վերականգնել:

Հարցում է: Կրկնելով, իմաստասերին հետ, որ «հարցումները աւելի կարելոր են պատասխաններէն»: : Ո՞վ պիտի պատասխանէ:

Հայերը չարչրկող եւ հայերու կողմէ չարչրկուող այս միտքերու որպէս եզրակացութիւն պիտի արձանագրեմ ժԹ. դարու ֆրանսացի բանաստեղծ Շարլ Փեկիի իմաստուն խօսքը. «Քաղաքականութեան մէջ երբեք պիտի չհասկցուինք: Թերեւս այս է կուսակցութիւններու խաղը»:

Մինչեւ ե՞րբ խաղալ: Եւ... Յետոյ ի՞նչ:

Յակոբ Պալեան

Հայրենիք

21 Մարտ 2025

2025-Ը ԴԵՌ 1984-Ը ՉԷ՝



Վարդան Թաճեան, Պէյրութ, 19 մարտ 2025, ԳԵՂԱԸԴ

Կ'ապրինք դարու մը մէջ, ուր ճշմարտութիւնը ենթակայ է սաստիկ յարձակումներու: Իրականութեան համար մոռոտ պայքարը այլեւս կառավարութիւններու միջեւ չէ միայն, այլ տեղի կ'ունենայ հասարակութիւններէն ներս, ընկերային կայքերու տարածքին, նոյնիսկ մեր ընտանիքներուն մէջ: Այս պայքարը ոչ ոք կրնայ անտեսել կամ զայն մեր փոխարէն մղելը ուրիշին պատուիրակել: Ապատեղեկատուութեան ուժերը աննահանջ են. անոնք կը ձգտին քանդել ժողովրդավարութեան հիմքերը ամբողջ աշխարհի տարածքին ու կ'աշխատին քաղաքացիներէն իւրիւր ու ջնջել հիմնաւորուած որոշումներ կայացնելու անոնց իրաւունքը:

Պատմութեան ընթացքին, տեղեկատուութեան վերահսկումը եղած է բռնակալներու ռազմավարութեան մէկ մասը: 20-րդ դարուն, Խորհրդային Միութեան եւ նացի Գերմանիոյ նման բռնապետական վարչակարգերը քարոզութեան միջոցաւ կը խաբէին իրենց քաղաքացիները՝ նորովի գրելով պատմութիւնը եւ ճնշելով անհանգստացնող ճշմարտութիւնները: Այսօր բռնատէրերը կը շարունակեն գործածել նոյն եղանակները, սակայն նոր գործիքներով. անոնք կը գործարկեն թուային ապատեղեկատուութիւն, արհեստական բանականութեամբ ստեղծուած կեղծ պնդումներ եւ *ալկորիթմներ*, որոնց նպատակն է շահագործել մարդոց զայրոյթն ու վախերը: Ռուսիոյ, Չինաստանի, Հունգարիոյ եւ Թուրքիոյ նման երկիրներու մէջ, պատումի (narrative-ի) վերահսկումը կը նշանակէ ժողովուրդի վերահսկում: Սակայն, նոյն ռազմավարութիւնը կը կիրարկուի նաեւ ժողովրդավար երկիրներու մէջ, ներառեալ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն, ուր այս առումով գոյները խտացան յատկապէս Տոնալտ Թրամփի ժամանակաշրջանին: Մարտի կէսերուն, ընկերային ցանցերով տարածուեցաւ ձայնագրութիւն մը, ուր մարդու կողմէ արհեստական ուսուցումով, Նիկոլ Փաշինեանի ձայնը կրկնօրինակած մեքենան «կ'արտայայտէր» թրքահաճոյ գաղափարներ: Ապատեղեկատուական այս յարձակումը տեղի կ'ունենար այն օրերուն, երբ Հայաստանի ու աշխարհի հայութիւնը կը գտնուէր յուզումներու եւ կրքոտ քննարկումներու մէջ Ագրայէճանի հետ «խաղաղութեան համաձայնագիրին» շուրջ: Ովքե՞ր նման բաներ կ'ընեն եւ ի՞նչ նպատակներ կը հետապնդեն: Այսպիսի հարցումները առաջինը հասցեագրուած կ'ըլլան անվտանգութեան



մարմիններուն, սակայն կեղծիքի մասին իրազեկումը, անոր ազդեցութեան չեզոքացումը ընկերութեան մէջ՝ իւրաքանչիւրիս պարտքն է ու պարտականութիւնը:

Ժամանակակից ապատեղեկատուութեան ամենէն նենգ մարտավարութիւնը այն է, որ ան ոչ միայն կը տարածէ սուտեր, այլեւ կ'ուզէ ոչնչացնել «ճշմարտութիւն» հասկացութիւնը: Երբ ամէն ինչ կը դրուի հարցականի տակ, երբ փաստերը կը դառնան քաղաքական նախընտրութեան հարց, երբ իրականութիւնը ինքզինք կը գտնէ անվերջ քննարկման մէջ, մարդիկ աւելի դիրտութեամբ կը դառնան վերահսկելի: Ճորճ Օրուէի 1984 գիրքին մէջ, Կուսակցութիւնը (Party) ոչ միայն կ'ուզէ, որ իր քաղաքացիները կրկնեն սուտերը, այլեւ կ'ուզէ, որ անոնք ամբողջովին կորսնցնեն ճշմարտութիւնը ճանչնալու կարողութիւնը: Ինծի համար, գիրքին ամենէն սարսափելի տեսարանը ոչ թէ Ուինսթըն Սմիթի մարմնական խոշտանգումն է, այլ անոր վայրկեան մը տատանումը, երբ ան կը հասկնայ, թէ ձեռքին մէջ ունի Կուսակցութեան սուտերուն ապացոյցը, բայց ի վերջոյ փաստաթուղթը կը դնէ «Յիշողութեան անցք»-ին մէջ՝ հնազանդելով իրականութեան ոչնչացման: 1984-ին մէջ, «Յիշողութեան անցք»ը մոռացութեան եւ ուրացումի անցքն էր:

Նոյնը կ'ընէ ապատեղեկատուութիւնը այսօր: Ան կը ստեղծէ այնքան աղմուկ, այնքան հակասական պատումներ, որ մարդիկ կը հրաժարին որոնելէ ճշմարտութիւնը: Ան գիտելիքը կը փոխարինէ շնականութեամբ, տրամաբանութիւնը՝ զառանցանքով եւ ի վերջոյ, ժողովրդավարութիւնը՝ բռնապետութեամբ: Սա միայն երկրիդ արտաքին թշնամիներուն մարտավարութիւնը չէ՝ ընդդէմ ազգային շահերուդ: Զայն կը գործածեն նաեւ երկրիդ քաղաքական գործիչներն ու շարժումները, որոնք ժողովրդավարութիւնը կ'ընդունին ոչ թէ իբրեւ պաշտպանութեան կարօտ համակարգ մը, այլ իբրեւ խոչընդոտ, գոր պետք է կործանել: Անշուշտ, անոր կը դիմուի հարուածելու համար իշխանութեան ձգտող մրցակիցներ եւ կատարելու համար արտաքին պատուէրներ՝ աշխարհաքաղաքական աւելի լայն պայքարներու մէջ:

Ա. Մ. Ն.ի մէջ, ոմանք հաւանաբար կը յուսային, թէ Քափիթոլիումի 2020 թուականի յունուարեան յարձակումէն եւ դաւադրական բազում տեսութիւններու մերկացումէն ետք, ալիքները պիտի փոխուին եւ կարելի պիտի ըլլայ անցեալին գիրկը անվերադարձ ուղարկել այն, ինչ շատեր որակեցին վատթարագոյնը՝ երկրի ամբողջ պատմութեան մէջ: Սակայն պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, որ բռնապետական շարժումները չեն անհետանար. անոնք կը վերախմբուին, կը յարմարին ու կը վերադառնան: 2024-ին այդ էր որ պատահեցաւ Ամերիկայի մէջ: Բազմաթիւ երկիրներու մէջ ալ ապատեղեկատուութիւն տարածողները չեն պահուրտիր. անոնք հրապարակաւ կը յայտարարեն պատմութիւնը լուծարելու, հաստատութիւնները քանդելու եւ իրենց օրակարգին չհամապատասխանող բոլոր ճշմարտութիւնները ջնջելու իրենց մտադրութիւնները: Տակաւին քանի մը օր առաջ էր, որ Ա. Մ. Ն.ի Կառավարման արդիւնաւետութեան բաժանմունքի ղեկավար Իլոն Մասք կ'ըսէր, թէ Հիթլերն ու Սթալինը չէին միլիոններ ջարդողը, այլ պետական հատուածի պաշտօնեաները:

Ի՞նչ կրնանք ընել: Պետք է գիտակցինք, որ այս պայքարը միայն կառավարութիւններունը չէ: Արտաքին ապատեղեկատուները սորված են օգտուիլ երկիրներու օրենսդրական բացերէն՝ իրենց սուտերը ներքին լրատուամիջոցներով տարածելու համար: Սա կը նշանակէ, որ պարտաւորութիւնները կարելոր չափով վերապահուած են մեզի՝ քաղաքացիներուն, լրագրողներուն, ուսուցիչներուն, մտաւորականներուն, հանրային



մտածողներուն: Իւրաքանչիւր անգամ որ սուտը չենք հերքեր, ամէն անգամ որ կը թոյլատրենք սուտի տարածումը իբրեւ «այլ կարծիք», կորսնցուցած կ'ըլլանք ճշմարտութեան պայքարին մէկ մասը:

Ապատեղեկատուութեան դէմ պայքարը միայն սուտերը հերքելը չէ. ան նաեւ ճշմարտութիւնը հաստատելն է: Ան կը պահանջէ հաւատարիմ ըլլալ վաւերական լրագրութեան ու տեղեկատուութեան, ինքնակրթուիլ եւ ուրիշներուն փոխանցել լրատուական գրագիտութիւնը: Իսկ ամենէն կարեւորը շնականութեան եւ անտարբերութեան տեղ չտալն է: Վոլթեր ըսած է. «Այն մարդիկ, որոնք կրնան ձեզ ստիպել անհեթեթութիւններ ընդունիլ, կրնան ձեզ ստիպել կատարել ջարդեր»: Վոլթեր մեզ կը նախագգուշացնէ այն մեծագոյն վտանգին մասին, որուն կ'ենթարկուինք այսօր. սուտերու տարածումը եթէ չկասեցուի, կրնայ յանգեցնել բռնութեան, ճնշումներու, հաշուեյարդարներու, սպանդներու, գաղթերու եւ ժողովրդավարութեան ոչնչացման:

Բայց հաւատքը կենդանի է: Եթէ ճշմարտութիւնը կարեւոր չըլլար, ապատեղեկատուութիւնը գոյութիւն չէր ունենար: Այն փաստը, որ Օրուէլի 1984 գիրքը վերջին քանի մը տարիներուն կրկին դարձաւ ամենաշատ վաճառուողը աշխարհի բազմաթիւ երկիրներու մէջ, կը նշանակէ, թէ մարդիկ տակաւին կը փնտռեն ճշմարտութիւնը եւ կ'ուզեն զայն հասկնալ: Ապատեղեկատուութեան կատարի տարածումը կը նշանակէ, որ իրականութիւնը ամբողջովին չէ վերահսկուած տակաւին, որ ապատեղեկատուութիւն տարածողները տակաւին չեն յաղթած:

Կը գտնուինք վճռորոշ ժամանակի մէջ: Ապագան կանխորոշուած չէ. զայն կը ձեւաւորեն անոր համար պայքարելու պատրաստ մարդիկ: Հարցը այս է՝ պիտի պայքարի՞նք: Պիտի մերժե՞նք իրականութիւնը վերաշարադրելու փորձերը: Պիտի մարտահրաւեր նետե՞նք սուտերուն անկախ անոնց ծագումէն:

Համոզումս է, որ պէ՛տք է պայքարինք, որովհետեւ նոյնիսկ 40 տարի ետք, տակաւին չենք հասած 1984-ին: 2025-ը դեռ 1984-ը չէ՛:

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ



Թուրքիոյ կազմակերպած Անթալիոյ դիւանագիտական համաժողովին, Ազերպայճանի Արտաքին գործոց նախարար Ճէյհուն Պայրամով դարձեալ պնդեց երկու նախապայմաններու վրայ՝ Հայաստանի հետ Խաղաղութեան դաշինքի ստորագրման համար: Մահմանադրութեան փոփոխութիւն եւ Մինսքի խումբի լուծում: “Այս երկու պայմաններու կատարուելէն ետք, խաղաղութեան դաշնագրի ստորագրման համար արգելք



պիտի չմնայ” յայտարարած էր Ալիեւ Ապրիլ 2ին Գերմանիոյ նախագահ Հանց Վալ թեր Սթայնմայերի հետ մամուլի ասուլիսի ընթացքին:

Հայաստանի Արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան պատասխանելով յայտնեց, թէ Հայաստան եւս Ազերպայճանի սահմանադրութեան մէջ իր հանդէպ հողային պահանջներ կը տեսնէ, սակայն, անոնց ջնջումը որպէս նախապայման չառաջադրեր խաղաղութեան դաշինքի ստորագրման: Ազերական կողմը անդրդուելի կը մնայ. նպատակը Հայաստանի սահմանադրութիւնը չէ, այլ Արցախի գոյութեան մասին որեւէ նշումի չքացումը:

Հռոմի Գրիգորեան կաթողիկէ համալսարանի մէջ «Քրիստոնէութիւնը Ազերպայճանի մէջ. պատմութիւն եւ արդիականութիւն» գիտաժողովի զլխաւոր նպատակը եւս Արցախի մէջ հայութեան գոյութեան ժխտումն է, պատմութեան խեղաթիւրումով, մշակութային ու հոգեւոր ժառանգութեան ձեւազեղծումով, ոչնչացումով, բնիկ ժողովուրդին տեղահանութեան անտեսումով, զանցառումով:

Այս երեւոյթներու զուգահեռականութիւնը ցոյց կու տայ ազերական կողմին հետեւողական կանխամտածուած քաղաքականութիւնը՝ հայկական ներկայութեան ու պատմական հետքերու ջնջումին, հայ ժողովուրդին՝ իրաց նոր դրութեան մը պարտադրման, ուր անդառնալիօրէն օրէնադրութեամբ ամրագրուած ըլլայ անկարելիութիւնը անոր վերադարձի որեւէ նախաձեռնութեան կամ քայլի:

Այս ռազմավարութիւնը նոր չէ, Թուրքիա եւս որդեգրած է: Վերջերս ԱՄՆու մէջ NAASR Հայկական ուսումնասիրութեան կեդրոնի կողմէ Monuments and Identities in the Caucasus, Karabakh, Nakhichevan and Azerbaijan in Contemporary Geopolitical Conflict հատորի քննարկման ընթացքին, փրոֆ. Մեպուհ Ասլանեան անդրադարձաւ թրքական պատմագրութեան մէջ տեղ գտած խեղաթիւրումներու, երեւոյթ մը որ 1918ին արդէն իր ծիլերը արձակած էր թուրք պատմաբան Ռեզա Նուրի «Ermeni Tarihi» (Հայոց պատմութիւն) գործով, ուր հայկական բարձրաւանդակին մէջ թրքական ներկայութեան կը վերագրուէր 4000ամեայ անցեալ, մինչ հայերը կը ներկայանան իբրեւ եկուորներ... տեսութիւն մը որ հետագային Ազերիները շարունակած են, ինչպէս՝ Ֆարիտա Մամետովա, Զիա Պունեաթով...:

Ուրեմն, բնաւ զարմանալի չէ որ Ալիեւ որդեգրէ պատմութեան խեղաթիւրման ռազմավարութիւնը, զայն քաղաքական գործիքի վերածելով, ամրապնդելու համար իր իշխանութիւնը, պարտադրելու պատմութեան վերընթերցումը, ուժի, սպառնալիքի, կաշառքի, բռնութեան միջոցներ գործածելով, մինչեւ Վատիկանի վաստակաւոր կաթողիկէ Գրիգորեան համալսարանը: Մէկ խօսքով որքան սուտը մեծ ըլլայ՝ այնքան աւելի հեշտ է զայն հաւատացնելը, ուժի գործադրութեամբ:

Նոյն տրամաբանութեան մէջ պէտք է դիտել Արցախի իշխանաւորներու դատումը, Ապրիլ 13ին Ազերպայճանի կողմէ գնդակոծումը Միւնիքի Խնածախ գիւղի Մշակոյթի տան, հայկական բանակին վերագրուող հրաձգութեան կեղծ ամբաստանութիւնները, եւրոպացի դէտերու միջնորդական առաքելութեան հետ գործակցութեան մերժումը... տնտեսական

հաղորդակցութեան ուղիներու բացման մերժումը: Մէկ կողմէ խաղաղութեան դաշինք կնքելու բանակցութիւններ վարել, միւս կողմէ սահմանային լարում ստեղծել... սա ցոյց կու տայ Ազերպայճանի մարտավարութեան հետապնդած գլխաւոր նպատակը՝ ապակայունացնել Հայաստանի ներքին քաղաքական վիճակը, յուսալով որ պատեհ առիթը կը ստեղծուի, նոր յարձակում մը գործելու եւ Սիւնիքի միջանցքը ուժի գործադրութեամբ բանալու:

ԺԻՐԱՅԻ ՉՈՒԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

17/4/2025

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



Ս. ԶԱՏԿՈՒԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ

Զանգակները կը դողանջեն Սուրբ Զատկուան աւետումով,

Միրտէ ի սիրտ կամար կ'ըլլան Սուրբ Յարութեան աւետիսով,

Երկնէ երկիր, բիր շուրթերէն աղօթքի պէս կը տարածուի՝

«Քրիստոս Յարեաւ ի Մեռելոց, Օրհնեալ է Յարութիւն Քրիստոսի»:

Եւ կը ցնծայ աշխարհն համակ, Յարութեան շո՛ւնչ կայ օդին մէջ,



Գարնանային ծաղիկները գեղածիծաղ լո՛յս կը սփռեն,
Թռչունները կը դայլայլեն, կ'երգեն զուարթ, սիրավարա՛ր,
Ժպիտ ունի երկինքն անգամ, կապո՛յտ-կապո՛յտ ան կը շողայ...

Հրրաշափառ Յարութեանըդ շունչով օձէ երկիրս, Տէ՛ր,
Թող փարատին ամպերը մութ, մառախուղը ցաւին ահեղ,
Լուսաբացը պայծառ շողայ, գիշերէն ետք խաւարամած,
Արեւալո՛յսն իր տարածէ օճախներուն հայրենական:

Եւ մահ չկայ սուրբ Խաչեալին, ինչպէս Լոյսին արդարութեան,
Որ չի թաղուիր, այլ կը յառնի զերթ գարունը ձմեռէն ետք,
Մէ՛ր, յո՛յս հաւա՛տք կը ներշնչէ մէն մի հայուն ամէնուրեք՝
Քրիստոս Յարեաւ ի Մեռելոց, Օրհնեալ է Ան, յար յաւիտեան:

6/3/2025

.....

ԳԱՐՆԱՆ

Գարո՛ւն, եկուր հայրենիքիս
Արեւներուդ տաք համբոյրով,
Ծաղիկներով զուարթագին,
Թռչուններուդ դայլայլներով,
Նորոգ շունչ բեր սիրագորով...

Մտի՛ր բոլոր տուներէն ներս,
Լուսամուտէն, դռներէն ներս,
Գգուանքովդ՝ վերքերն օձէ
Բիւր սիրտերուն տազնապահեւ,
Հոգիներուն տառապահեւ...

Գետակներուդ գոռ շառաչով
Աւետիսը բն՝ ը գարթօնքիդ,
Յոյսն ու լոյսը կեանքին նորոգ,
Բերկրանքն անգին բողբոջումիդ,
Նիրհած կեանքի վերյառնումին...

Եռանդդ տո՛ւր փոքրին, մեծին,



Աւիշովդ գարնանայորդ
Ծաղկին սերեր Վահագնաբորբ,
Ընդ եղեգան երկիրս հին
Կենսախայտայ ծնունդներով...
20/3/2018

.....

ՏԱՂՍ

Երկնէն ցօղ իջաւ բառս համբուրեց,
Աստղերու մրմունջ բերաւ հնչիւնիս,
Խորհուրդով օծեց եւ լուսազարդեց,
Մոգական փայլ մը տուաւ պարզ տողիս...

Լուսաթել տողիս հետ թելածեցի
Երկնին մէջ լազուր, հոգիներէն ներս,
Ցոլքեր քաղեցի անոնց անհունէն,
Նոր ճաճանչներով տաղս հիւսեցի...

Տաղս նեկտարն էր սեր-ծաղիկներուն,
Քաղուած շիթ առ շիթ անոնց սիրտերէն,
Արցունքէն վճիտ, հառաչանքներէն,
Մանուած լոյսովը սիրոյս ճառագուն...

Տա՛ղ երկնապարգել եւ երազահել,
Հոգիներէն նես կա՛թ-կա՛թ դուն ցաթե
Մէր, յոյս ու հաւատք, լոյսի ճաճանչներ,
Օրհնութիւն տեղա՛յ մանանա որպէս...
5/12/2016

.....

ԱՊՐԻԼ Է

Գարնան ամիս է, ծաղկանց Ապրիլ է,
Սրտիս մէջ սակայն միացող վերք է,
Դեռ արնածոր է, դեռ չսպիացող,
Ահա մէկ դար է...ցաւ է տանջակոծ:

Գարնան ամիս է, սիրտ ծակող յուշ է
Մեր մեռելները չհանգստացան,
Երազն անոնց դեռ մնայ անկատար,



Խիղճի սրմունք է, անողոք վիշտ է:

Պանդուխտ լեռը մեր դեռ գերեվարեալ
Հայուն կը սպասէ, տիրոջն հարագատ,
Մինչեւ ե՞րբ մնայ օտար լուծի տակ,
Իսկ ոտխը նենգ կը չարախնդայ:

Գարնան ամիս է, յոյսը հրավառի
Պայքար կայ երկար, ա՛զգ իմ տարագիր,
Հաւաքէ ուժդ, դեռ պիտի կռուիս
Տէրը դառնալու հայրենեաց հողիդ..

13/4/2018

.....

ԳԱՐՆԱՆ ՇՈՒՆՉՈՎ

Գարնան շունչով թող արթննայ
Ազգս հայոց, երկիրս թանկ,
Հին աւիշով դարձեալ ծաղկի
Նորահրաշ ու կենսաբուրեան...

Թօթուած ցուրտն ու բուքը ձմրան,
Թող ընձիւղի դալարագեղ,
Ծիլ ու ծաղկով հոգեհմայ,
Բոյր, թոյրերով բուրումնաւետ...

Ծիծեռնակներն վերադառնան

Իրենց բոյնը վերաշինեն,



Նոր ծիծառներ ծնին, շատնան,

Նորոգ կեանքդ կենսաւետեն:

Թող բազմանան զերթ օրհնութիւն

Օճախներդ հայրենաշէն,

Վարդ մանուկներ թող դայլայլեն

Գարունդ վառ՝ նոր արշալոյս:

19/3/2018

.....

Կ՝ՈՒՋԵՄ ՀԻՄԱ

Կ՛ուզեմ հիմա անհոգ նստիլ ծառի շուքին,

Լսել անձայն, լուռ մեղեդին որ տարածուի

Տերեւներու խշխշոցէն, մեղմ թրթիռէն քնքուշ սիւքին,

Խըմել բերկրանքն կեանքն ապրելու ակնթարթին...

Կ՛ուզեմ շոյել հատի՛կ-հատի՛կ թերթերը վառ

Ծաղկանց գունեղ, որ ժպիտն են մայր բնութեան,

Զոր շոպլաբար անոնք բաշխեն անցորդներուն՝

Կենսավարար, սիրավարար ու անհատոյց...

Կ՛ուզեմ դիտել երկարօրէն երկնի լազուրն,

Հայելին վառ՝ մարդ էակի ապրումներուն,

Որ մերթ խնդայ կապո՛յտ-կապո՛յտ, արեւավառ,

Մերթ ալ տխրի ամպերով գորշ ու մթամաճ...

Կ՛ուզեմ փարիլ գորովով տաք քար ու ժայռին,



Որոնք թաքուն գաղտնիք մ'ունին քարէ սրտին,

Որուն եթէ հայիս քնքուշ ու սիրավատ՝

Քեզ կը պատմեն խորհուրդն իրենց խոր ու անյայտ...

Ու դեռ յարել հայեացքս լուռ հեռուներուն՝

Մշուշապատ հորիզոնին գաղտնաթաքուր,

Ուրկէ որքան արշալոյսներ դեռ պիտ' ծագին,

Լոյսով, յոյսով պիտ' ողողեն սիրտերը բիրտ...

9/4/2020

ՊԱՏԷՆ ԿԱԽՈՒԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ԿՐ ՆԵՐՇՆՉԵՆ ՄԵՉ



Դպրոցը, ուր կը պաշտօնավարեմ ես, կը պատկանի Հ. Բ. Ը. Միութեան: Եւ այդ հանգամանքն ալ մղած է կ'երեւի վարժարանին երբեմնի պատասխանատուները՝ որ միութեան նախկին երկարամեայ նախագահ ու մեծանուն բարերար Ալէք Մանուկեանի լուսանկարը պատշաճօրէն կախեն շէնքին Ա. յարկի միջանցք-սրահին պատէն, տեսչութեան սենեակին դռան գրեթէ քովը: Ապակեպատ շրջանակեալ սեւ-ճերմակ մեծղի լուսանկար մը, որ ո՛վ գիտէ քանի տասնամեակէ իվեր հոն է, նո՛յն պատին վրայ, եկող-գացող սերունդներու աչքին առջեւ:

Գիտենք, որ Ալէք Մանուկեան (1901-1996) Բարեգործականի նախագահի պաշտօնը ձեռնհասօրէն վարեց երկար տարիներ, 1953-1989:

Տարիներէ իվեր, բնագոյաբար կամ ներքին գիտակցական մղումով մը, ամէն առաւօտ երբ դպրոցին սանդուխներէն վեր կը բարձրանամ դէպի Բ. յարկ, վերոնշեալ միջանցքին մէջ աչքերս կը հանդիպին... Ալէք Մանուկեանի աչքերուն: Կարծէք առաջին «Բարի լոյս»-ը իրէ՛ն կ'ըսեմ...: Այդ լուսանկարը կը գրաւէ զիս, բա՛ն մը կ'արթնցնէ իմ տոհմիկ ապրումներուն մէջ:

Քանի մը օր առաջ, երբ դասարան մտայ, հարցում մը ուղղեցի իմ աշակերտներուն.

— Տղա՛ք, վարի յարկի միջանցքին պատէն կախուած լուսանկարը որո՞ն կը պատկանի: Ո՞վ է այդ դէմքը:

Տիրեց քար-լռութիւն: Ո՛չ մէկ պատասխան ստացայ: Հիասթափուեցայ:

Այս աշակերտները, արդէն 16-17 տարեկան, առնուազն տա՛սը տարիէ այս վարժարանը կը յաճախեն ու օրուան զանազան պահերուն կ'երթեւեկեն վերոնշեալ միջանցք-սրահին մէջ,



Ալէք Մանուկեանի... հայեացքին տակ, բայց հիմա կը պարզուի որ չէին հետաքրքրուած, թէ ո՞վ էր վերէն զիրենք դիտողը...:

Բայց կար աւելի՛ ողբերգականը: Տղաքը գրեթէ չէին լսած մեծանուն նախագահին ու բարերարին անունը: Անոնք գաղափար անգամ չունէին, թէ Իզմիրի կողմերէն դէպի Ամերիկա գաղթած այդ հնարամիտ հայորդին ինչպէ՛ս կազմաւորեց ինքզինք, ինչպէ՛ս հիմնեց հսկայ գործատուներ, ազգասիրական ու կրթասէր հազուագիւտ մղումով՝ քանիքանի ամէնօրեայ հայ դպրոցներ բացաւ Ամերիկայէն մինչեւ Արժանթին, Մոնթեվիդէոյէն մինչեւ Թեհրան...:

*

Այս դէպքը մղեց զիս, որ պահ մը մտածեմ... պատէն կախուած լուսանկարներու մասին: Անոնք ո՞ր քթանով կ'ազդեն մեր վրայ, կրնա՞ն ներշնչել մեզ:

Շա՛տ տարիներ առաջ, երբ տակաւին նախակրթարանի աշակերտ էի ու թերխաջ դպիր՝ չալէպի մեր Սրբոց Քառասնից Մանկանց մայր եկեղեցիէն ներս, քահանայից խորհրդարանին մէջ խո՛րապէս տպաւորուել էի պատէն կախեալ երկու խոշոր լուսանկարներէն: Մին կը ներկայացնէր Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան վշտակիր կաթողիկոսը, միւսը՝ անոր աթոռակից Բարգէն Ա. Կիլիկեցեանը: Սպիտակ պատկառելի մօրուքով երկու հոգեւորականներ...:

Հարցումս հետեւեալն է. պատէն կախուած լուսանկար մը կրնա՞յ կայծ մը բռնկեցնել զայն դիտողին հոգիին մէջ:

Մտաբերեցէ՛ք պահ մը մեր ազգապատկան սրահներուն կամ միութենական ակումբներուն պատերէն կախուած երեւելի դէմքերու լուսանկարները: Ատոնք ինչպիսի՞ ազդեցութիւն կրնան գործել մեր վրայ, կամ արդեօք ազդեցութիւն կը գործե՞ն իսկապէս:

Օ՛, պատէն կախուած լուսանկարները...

Երբ մուտք կը գործեմ քաղաքիս Հայ Կաթողիկէ Զուարթնոց եկեղեցւոյ ներքնասրահը՝ հայեացքս պահ մը անպայման սեւեռուած կը մնայ կարտինալ Աղաճանեանի պատէն կախուած լուսանկարին վրայ:

Միախորհեան հայրերու վանատան մէջ մի՛շտ ալ յուզում մը ապրած եմ՝ նայելով Միախորհար Սեբաստացի Աբբահօր պատէն կախուած լուսանկարին:

Հ.Մ.Ը.Մ.-ի ակումբի սրահին մէջ երկա՛ր-երկա՛ր դիտած եմ կողք-կողքի կախուած լուսանկարները Շաւարշ Քրիսեանին, Գրիգոր Յակոբեանին ու Յովհաննէս Հինդլեանին:

Ճեմարանի տեսչարանին մէջ հայեացքս սեւեռաբիբ ինկած է դանիացի հայասեր բարերարուհի օրդ. Քարէն Եփփէի լուսանկարին վրայ: Հայ Ծերանոցի դահլիճին մէջ՝ Մեծն Ներսէս հայրապետի նկարին վրայ (դեռ Դ. դարուն՝ ան հիմնած էր առաջին ծերանոցներն ու մարդասիրական տունները Հայաստանի մէջ):

Ամէն անգամ որ Թէքէեան Տան մէջ դասախօսութեան մը ներկայ եղած եմ՝ իմ ուշադրութենէն չէ վրիպած Վահան Թէքէեանի պատէն կախուած լուսանկարը: Ու մրմնջած եմ գողունի.

Հաշուեյարդար. ի՞նչ մնաց, կէանքէն ինձի ի՞նչ մնաց.

Ինչ որ տուի ուրիշին, տարօրինա՛կ, ա՛յն միայն.

Եւ այսպէս, ամէն տեղ՝ լուսանկար մը, լուսանկարնե՛ր...:

Կը հաւատա՛մ պատէն կախուած լուսանկարներու ներգործութեան՝ մեր հոգեբանութեան, մտածական աշխարհին ու խիղճին վրայ: Երանի՛ թէ այդ լուսանկարներուն թիւը աւելցնենք: Երանի՛ թէ մեր հայկական վարժարաններուն իւրաքանչիւր դասարանի պատէն կախենք գրողի մը, ազգային նուիրեալ դէմքի մը, վաստակաւոր ու բարեհամբաւ տնօրէնի մը կամ դաստիարակի մը լուսանկարը. տեղ մը՝ Ալիշան ու Խրիմեան Հայրիկ, ուրիշ տեղ մը՝ Գր. Զօհրապ եւ Վարուժան, այլ տեղ մը՝ Մեծն Տիգրան ու Հայկ Նահապետ, անդին՝ Ծառուկեան



մը, Միմոն Միմոնեան մը, Մայաթ Նովա մը, գօր. Անդրանիկ մը, Մարտիրոս Մարեան մը, Աճառեան մը, Կոմիտաս մը, Արամ Խաչատրեան մը...:

Անոնք բարոյապէս ուղեցո՞յց կրնան ըլլալ մեզի ու մեր զաւակներուն:

Լուսանկարը կենդանի ու շօշափելի կը դարձնէ անհետացած դէմքերուն յիշատակը: Լուսանկարը «կը կենդանացնէ» մեզմէ առջաւետ բաժնուած հարազատներուն կամ ծանօթներուն ոգին...: Առանց լուսանկարի՝ տարտամութիւնն ու մշո՛ւշն է որ կը պատէ այդ ննջեցեալներուն մասին մեր պատկերացումները...:

Այս մասին ցնցիչ անդրադարձում մը ունեցեր էի տարիներ առաջ, երբ այցելէր էի Պոլիս՝ արեւմտահայ մեր մշակոյթին երբեմնի օրրանը:

Բարեկամներս զիս ազնուօրէն առաջնորդեր էին նախ Գումգաբու, հայոց Ազգ. Պատրիարքարանը, այնուհետեւ՝ Ետիգուլէ, Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոց:

Պատրիարքարանի մայր դահլիճին պատերէն կախուած երբեմնի պատրիարքներուն խոշոր լուսանկարները խորապէս տպաւորած էին զիս: Ներսէս Վարժապետեան, Մաղաքիա Օրմանեան, Իզմիրլեան, Եղիշէ Դուրեան, Մեսրոպ Նարոյեան, Գարեգին Խաչատուրեան-Տրպալիզոնի, Շնորհք պատրիարք իրենց ծանր շուքը կը ձգէին կարծէք իմ վրայ՝ ապակեայ շրջանակեալ իրենց լուսանկարներուն ընդմէջէն:

Աւելի հիները, ԺԹ. դարու պատրիարքները, բոլորովին նոր դիմագիծեր կը բերէին ինծի:

-- Հա՛, ա՛յս էր ուրեմն Ստեփանոս Աղանի պատրիարքը, ա՛յս էր Գեորգ Քերէսթէճեանը (յետոյ՝ Էջմիածնայ գահակալ), ա՛յս էր պրոսպաքի Պօղոս Թաքթաքեանը, ա՛յս էր Խորէն Աշրգեանը,-- հարց կու տայի ես ինծի:

Նոյն պատկերը պիտի կրկուէր Ս. Փրկիչ հիւանդանոցին երդիքին տակ եւս, սակայն քիչ մը տարբեր անդրադարձումով:

Հոս, բժշկապետութեան ժողովասենեակին մէջ, շատ բծախնդիր դասաւորումով, պատերուն վրայ քով-քովի շարուած էին շրջանակեալ լուսանկարները հիւանդանոցի նախկին բոլո՛ր բժշկապետերուն: Քանի որ հայոց հիւանդանոցը հիմնուած էր 1832-ին («Գազազ» Արթին ամիրա Պեղճեանի նախաձեռնութեամբ), ուրեմն, շուրջ 170 տարիներու իրերայաջորդ հայ բժշկապետերու լուսանկարներն էին որ կը տողանցէին պատերուն վրայ...: Հոն կը տեսնէի տոքթ. Գրիգոր Մոզեանը, տոքթ. Միքայէլ Խորասանճեանը, տոքթ. Վիչէն Օրմանեանը (Օրմանեան սրբազանին եղբայրը), տոքթ. Նազարէթ Տաղաւարեանը (Մեծ Եղեռնի զոհերէն), տոքթ. Գրիգոր Դաւիթեանը, տոքթ. Սարգիս Նահապետեանը, տոքթ. Հրանդ Փէշտիմալճեանը, տոքթ. Հայրօ Հայրապետեանը եւ այլն, եւ այլն:

Բայց կէտ մը կար, որ զարմացուցած էր զիս: Լուսանկարներու շարքին մէջ կային նաեւ 6-7... դատարկ շրջանակներ: Այո՛, ապակեպատ դատարկ շրջանակներ, առանց լուսանկարի, այլ միայն անունի նշումով: Հասկնալի էր. հին շրջաններու կարգ մը բժշկապետերու լուսանկարները կարելի չէր եղած գտնել եւ ուստի այդ «անբախտ»-ները տեղ գտած էին իրենց բախտաւոր պաշտօնակիցներուն կողքին՝ լոկ անունով...:

Այդ պահուն է ահաւասիկ, որ զգացի լուսանկարի մը արժէքը: Բախտաւոր բժշկապետերը իրենց հայեացքով, դիմագիծով, հագուածքով կը դրոշմուէին իմ մտքին մէջ, մինչդեռ միւսները՝ լուսանկար չունեցող «անբախտ»-ները, չէին յաջողեր դոյզն զգացում մը արթնցնել իմ ներսիդին...:

*

Երկու պատկեր եւս:

ա) Դպրոցին մէջն եմ, եւ հայերէն լեզուի ամսական քննութեան պահն է: Սովորութիւն է քննութեան ատեն աշակերտները հաւաքել վարժարանի գրադարանին մէջ, որ ընդարձակ յարմարաւետ դահլիճ մըն է՝ գիրքերով բեռնաւոր դարաններով: Դահլիճին պատերն ալ զարդարուած են մեր ամենէն համբաւաւոր գրողներուն խոշոր դիմանկարներով. Սիլվա



Կապուտիկեան, Յովհաննէս Շիրազ, Սիամանթօ, Գուրգէն Մահարի, Պարոյր Սեւակ, Գամառ-Քաթիպա եւ այլն:

Պահ մը, խթանելու համար տղաքը, քիչ մըն ալ կատակով՝ ըսի իրենց.

-- Տղա՛ք, տեսէ՛ք, Մեծարենցն ու Ռուբէն Զարդարեանը պատէն ձեզ կը դիտեն ու... կ'օրհնեն: Անսխալ ու կատարեալ պատասխանեցէք քննութեան հարցումներուն:

Տղաքը, բոլորը մէկ, իրենց նայուածքը դարձուցին դէպի պատը ու այս անգամ, քննութիւնը մոռցած, սկսան հարցնել թէ ո՞րն էր Մեծարենցը, ո՞րն էր Զարդարեանը, անոնց կողքին կախուած լուսանկարները որո՞նց կը պատկանէին...:

Բան մը շարժե՞ց այս անդրադարձումը մեր պատանի տղոց ներսիդին,-- չեմ գիտեր: Բայց թերեւս, այսուհետեւ, այդ տղոցմէ՛ ոմանք ամէն անգամ որ գրադարանի դահլիճը մտնեն հերթական գրաւոր քննութեան համար, պահ մը իրենց հայեացքը սեւեռեն պատերուն ու աչք-աչքի գան Մեծարենցին, Թումանեանին ու Իսահակեանին հետ: Ու վստահ եմ որ այդ մեծերը իրենց երկնային օրհնութիւնը չեն զլանար անոնց...:

բ) Քանի մը սիրուն լուսանկարներ հասան ինձի Թւորիզէն:

Թւորիզը Իրանի հիւսիսային քաղաքներէն մէկն է, պատմական Ատրպատականի հռչակաւոր ուստանը: Հոն, առ այսօր, ունինք նօսրացած բայց աշխոյժ գաղութ մը, որ ամէն տարի կը կազմակերպէ նաեւ ԳԻՐՔԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ: Այստեղ, մղիչ ուժ մըն է անշուշտ թեմին գրասէր ու մտաւորական առաջնորդը՝ մեր սիրեցեալ Գրիգոր արք. ՉիՖթճեանը:

Այս ցուցահանդէսները կը սարքուին տեղւոյն Ազգ. վարժարանի գրադարանին մէջ, որուն պատերը, դատելով նկարներէն, գեղեցկօրէն զարդարուած են ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ:

Պատկերը հմայիչ է: Գիրքերով ծանրաբեռնուած դարաննէ՛ր, ցուցադրուած կամ վաճառքի հանուած գոյնզգոյն գիրքե՛ր եւ պատէն կախուած գրողներու դիմանկարնէ՛ր, որոնք օրհնութիւն կը ցօղեն այցելուներու զլխուն...:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

"Արարատ", Պէյրութ, 11.3.2025)

ԼՍԵԼՈՒ ԵՒ ԽՕՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թէեւ մեր գիւղին մէջ երեք դպրոց կար, բայց ես ու քոյրս՝ Կիւլէնը, կը յաճախէինք Քեսապի մէկ դպրոցը՝ քիչ մը աւելի արաբերէն սորվելու պատրուակով: Մայրս ճարեր էր վարձու տուն մը, ուր կը մնայինք դպրոցական օրերուն, որովհետեւ ամէն օր, ցուրտ ու մութ ամիսներուն, հնարաւոր չէր հինգ-վեց քիլոմէթր ճամբայ կտրել դպրոց հասնելու եւ երեկոյեան նոյն ճամբով տուն վերադառնալու համար: Մութուլոյսին ճամբայ կ'ելլէինք, իսկ երեկոյեան, կէս ճամբան չկտրած, մութը կը կոխէր: Թոպեկները կ'ոռնային աջ ու ձախ:

Մենք մօրս պատրաստած պաշարը հաշիւով կը սպառէինք: Գումար մըն ալ դրած կ'ըլլար գրպանիս մէջ՝ անով Միսաք պապուկի խանութէն քիլո մը արմաւ կամ տուփ մը հրուշակ գնելու համար: Հրուշակի կէսն ալ շաբթու վերջ տուն կը տանէինք մեր մանր քոյրերուն իբրեւ բաժին:

Մեզմէ բացի՝ հեռու գիւղերէն՝ Տուգաղաճէն, Վերի եւ Վարի Պաղճաղազներէն ու Գարատուրանէն ուրիշներ ալ կային վարձու տուններու մէջ:

Մուրատ նանար կը կանչէինք իրեն: Թէ ի՛նչ էր բուն անունը՝ հաւանաբար թոռներն ալ չէին գիտեր: Այդպէս է մեր կողմերը, կիները կը ճանչցուէին իրենց հայրական մականունի կրճատ ձեւով: Մուրատ նանարը Վերի Պաղճաղազէն Կարոյին մայրն էր, որ դպրոցական տարեջրջանին իր դպրոցական թոռները առած՝ Քեսապ կը փոխադրուէր, վարձու տան մը մէջ: Նոյն դպրոցը կը յաճախէինք:



Ժամը 4-ին դպրոցէն կ'արձակուէինք: Մուրին հետ Քեսապի լամբերը կը վառէին. գիւղին առջեւ դրուած հսկայ շարժիչի հոնդիւնէն գիւղը կը դողար: Մեր միւս գիւղերուն մէջ տակաւին ելեկտարականութիւն չկար: Կը հանգստանայինք, դասերը կը պատրաստէինք, կ'ընթրէինք, ու գիտէինք, որ Մուրատ նանարը հիմա կը սպասէր մեզ: Քեսապը երկուքի բաժնող խանտակին ձախ կողմը մենք էինք, իսկ Մուրատ նանարենք՝ աջ կողմը: Մեր ճամբան վերի կամուրջէն կ'անցնէր:

Կլոր ցածկեկ սեղանը դրուած կ'ըլլար սենեակին մէջտեղ. ատիկա ճաշասեղան էր, գրասեղան էր ու վերջապէս՝ խաղասեղան: Մենք՝ 6-8 հոգի, կը բոլորուէինք անոր շուրջ. Մուրատ նանարը խսիրին վրայ նստած կ'ըլլար, երկու ափերը իրարու վրայ ծունկին դրած ու կը հետեւէր մեզի: Սեղանին դրուած չիր ու չամիչ կ'ըլլար, ընկոյզ, բաներ մըն ալ մենք կը տանէինք մօրս թելադրութեամբ: Ու կը սկսէինք մեր գրոյցն ու խաղերը: Մէկը հանելուկ մը կ'ըսէր, միւսը՝ շուտասելուկ մը, ոմանք երեք քար կը խաղային, աղջիկները՝ «խէճ», այսինքն մատներու չորս կամրջակներէն անցնող հինգ քար: Մուրատ նանարին ներողամիտ ժպիտը, մէկ ծունկէն միւսին գացող ափերը մեզի կը սորվեցնէին չընդմիջել խօսակիցին խօսքը, լաւ լսել, հասկնալ, չպոռալ, աղմուկ չբարձրացնել, չհեզնել: Մուրատ նանարը իր լռութեամբ մեզ աւելի լաւ կը կառավարէր, քան մեր ուսուցիչները իրենց սաստերով եւ գաւազանի սպառնալից շարժումներով:

Տեղին Խօսելու եւ խօսակիցը մտիկ ընելու արուեստը ուրկէ՞ սորված էր Մուրատ նանարը: Գրել կարողալ ունէ՞ր, թէ ոչ՝ չեմ գիտեր, բայց երեւի շատ լաւ գիտէր, որ փոքրիկները միասին խաղալով խօսիլ կը սորվին, լսել կը սորվին, մտածել կը սորվին:

Դեռ չեմ կրցած հասկնալ, թէ խօսակցելու, գրուցելու արուեստը կրթութեան եւ ուսման հետ ի՛նչ կապ ունի: Շատ անգամ ուսեալը աւելի անկիրթ ու անպատկառ կ'երեւի: Աստուած իմ, հեռատեսիլէն սփռուող հարցազրոյցներն ու բանավեճերը կը լսես: Կը զարմանաս, ինչո՞ւ մարդիկ ելեր եկեր են հարթակ, հա՛րց մը քննարկելու, կեցուածք մը արտայայտելու, զիրա՛ր ըլլելու ու հասկնալու համար, թէ պարզապէս ճճաւալու, ճոճաւալու, ոռնաւալու, կատաղօրէն պոռչտաւալու, զիրար վիրաւորելու, գռեհկաբանելու եւ հայհոյելու համար:

Մուրատ նանարը գլուխը քիչ մը թեքելով ժամացոյցին կը նայէր: Սա ըսել է անկողին երթալու ժամը եկաւ, որովհետեւ ժամը 9-ին Քեսապի շարժիչը մէկ երկու անգամ հազալով

պիտի լռէր, լամբերը պիտի մարէին ու Քեսապի գոհիները թաղուէին անթափանց մթութեան մէջ:

Աստուած հոգիդ լուսաւորէ, Մուրա՛տ Նանար:

ՅԱԿՈԲ ԶՈՒԱՔԵԱՆ

ՅԻՄՆԱՄԵԱՅ ԱՆԹԵՂՈՒԱԾ ՅՈՒՇԵՐ



Այսօր Լիբանանի պատերազմը կ'աւարտէ իր յիսնամեակը: Թէեւ յիսնամեայ տարեդարձ մը ոսկեայ յորելենական կը կոչուի , բայց այս մէկը կը բնորոշուի իր սեւ ու անջնջելի մրուրով, որուն դրոշմին տակ ապրեցանք սարսափ, վիշտ, տառապանք եւ կորսնցուցինք սիրելիներ, երագներ, խաղաղ ու քաղցր օրեր:

...

Հրթիռներու տեղատարափը վերջապէս դադրեցաւ: Սահմուկեցնող էր ինքնին լռութիւնը: Լռութիւն մը, որ անորոշութեան ու սարսափի լեղիով շաղախուած էր:

Յանկարծ լսուեցաւ կնոջ մը գոռոցը ու աղիողորմ լացը: Թաղեցիներս դուրս վազեցինք մեր շեմերէն: Մայր մըն էր, որ մազերը կը փետտէր եւ ծունկերը կը ծեծէր:

-Յարութիկիս գլուխը չկայ. Յարութիկիս գլուխը չկայ:

Ես Լիբանանի պատերազմը այս դէպքով ճանչցայ: Յաջորդ օրերուն ալ տեսայ Յարութիկին մազերը,

արիւնը ու մաշկի կտորները փակած Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցոյ հանդիպակած շէնքին պատերուն վրայ: Ես կը կարծէի, թէ պատերազմը պատմութեան գիրքերուն պատկանող բառ մը կամ եղելութիւն մըն է, ինչպէս՝ Վարդանանց պատերազմը, Խաչակիրներու պատերազմները...եւ յանկարծ անդրադարձայ, որ պատերազմը մեր գլխուն վրայ սաւառնող հրթիռներն են, մայրիներու երկիրը հրկիզող կրակն է եւ անոր որդիները հնձող մանգաղն է:

Յարութիկը մեր թաղին առաջին զոհն էր, որուն պատանի մարմինը ծուստեց անսպասելի հրթիռ մը: Անոր յաջորդեցին մեր տան դրկից տասնիներ տարեկան Միշելը, նոյն տարիքի Մոսիկը, Լութֆիկին տասնետօթը տարեկան դուստրը, յի Վարդիթերը...: Անցեալին, եկեղեցոյ կոչնակը հագուադէպ կը հնչէր եւ միմիայն տարեցներուն մահը կը գուժէր, սակայն պատերազմի օրերուն ան աշխուժացաւ ու տարիքները շուարեցաւ:

Պատանուհի էի, թովտուն երագներով, սակայն հրթիռներուն պատճառած ահն ու սարսափը իլեցին քաղցր երագներս ու փոխարինեցին՝ կոշմարներով: Մօրս վիզին փաթթուած կու լայի, ամբողջ մարմնովս կը դողայի, չիմանալով, որ յաջորդ զոհը մայրս պիտի ըլլար՝ անցարգելներու պատճառով պիտի չհասներ արեւմտեան Պէրլութի Ամերիկեան հիւանդանոցը, բուժումը ստանալու համար...:

Պէրլութը կիսուեցաւ երկուքի՝ արեւմտեան ու արեւելեան շրջաններու: Իրականութեան մէջ Պէրլութը մասնատուեցաւ կոտորակներու, ամէն մէկ գաղթող իր հետ տարաւ մասնիկ մը



Պէրոյթէն, գայն զետեղելու համար իր անտէր բարձին տակ, կամ որպէս սպեղանի, լուծելու գայն իր կարօտակէզ սուրճի բաժակին մէջ: Պէրոյթը եղաւ մերթ զմերթ մը՝ արաբական աշխարհին սօթը մեղմացնող, եւ մերթ արեւի ցոլք մը՝ հեռու աշխարհներուն սառնամանիքը ջերմացնող:

Անցեալին, դպրոցները կը փակուէին ամբան ու տօնական օրերուն, սակայն պատերազմը եկաւ որոշելու դպրոցներու բացման ու փակման ժամանակացոյցը: Մեծահասակ աշակերտներ զէնք շակեցին եւ մասնակից դարձան եղբայրասպան պատերազմին: Ափսոս, որ անոնցմէ շատերը չվերադարձան իրենց դպրոցական գրասեղաններուն:

Նախապատերազմեան օրերուն Պէրոյթի օդակայանը կ'այցելէինք, որպէս ժամանցի ու հաճոյքի վայր, համեղ կորեկ ու պաղպաղակ ուտելու եւ պատշգամէն օդանաւներուն թռիչքն ու վայրէջքը դիտելու: Պատերազմի օրերուն մեր սիրելի օդակայանը մերթ ընթ մերթ փակուեցաւ, հինցաւ, տխրեցաւ, իսկ «աշխոյժ» օրերուն ականատես դարձաւ իր զաւակներուն զանգուածային գաղթին: Կարօտը դարձաւ համատարած ու սիրտ ճկող իրականութիւն մը: Ծնողներ իրենց զաւակներուն գաղթը լալու փոխարէն իրենք զիրենք մխիթարեցին ըսելով. «Հոգ չէ, զաւակս ինձմէ հեռու թող ըլլայ, հրթիռներուն ճարակ չըլլայ»:

Պատերազմը սկսաւ յստակ կողմերու բախումով, ապա ընդարձակեցաւ, գունաւորուեցաւ ու վերածուեցաւ, կրօնական, կուսակցական, գաղափարական, դաւանանքային... արինալի բախումներու: Նոյնպէս ալ ծաւալեցաւ հրթիռներուն կարողականութիւնը ու պատճառած քանդումին տարողութիւնը: Տարուէ տարի զոհերուն թիւը աճեցաւ եւ մեր շուրջը բազմացան սեւագգեստ ու սգակիր կանայք: Քաղաքական դէմքեր սպաննուեցան, անմեղներ ահաբեկուեցան, ականներ պայթեցան հոծ բնակարանային շրջաններու մէջ, առեւանգուածներու եւ անյայտ կորածներու թիւը շատցաւ...:

Հաց եւ ջուր ճարելը դարձաւ լիբանանցիին ամէնէն մեծ մտահոգութիւնը, իսկ մոմեր եւ մարտկոցներ ապահովելը՝ անհրաժեշտութիւն: Համատարած խաւար պատեց, անցեալին շէնշող լոյսերու մէջ լողացող, Լիբանանի տարածքը: Յաճախ լսած էինք, թէ Պէրոյթը չէր քնանար եւ զբօսաշրջիկներով կը խայտար, սակայն պատերազմին, Պէրոյթը քնացաւ, լացաւ, որբացաւ, իսկ իր կեդրոնը՝ սիրտը, բզկիկ-բզկիկ եղաւ ու մահաքունի մտաւ:

Գեղեցիկ Լիբանանին պատկերը մոայլեցաւ, քանդումի երեւոյթները կլանեցին քաղաք, լեռ ու դաշտ: կողոպուտն ու աւարը արտօնելի նկատուեցան : Գաղթողներուն բնակարանները ու գոյքերը բռնագրաւուեցան: Բարոյական ըմբռնումները նահանջեցին, փոքր վէճէ մը առաջացած ռճիրներ արձանագրուեցան, օրինազանցութիւնը բնական երեւոյթ դարձաւ, իսկ «զէնքի լեզու»ն՝ ամէնէն խօսունն ու հասկնալին:

Բարեբախտաբար այժմու արագ լրատուական ցանցերն ու հարթակները չկային, եւ տեղական հեռատեսիլին սփռած լուրերով եւ սահմանափակ պատկերներով կը բաւարարուէինք: Անգիտակ էինք պատերազմին ահաւորութենէն ու անոր իսկական տարողութենէն...:

-Երկու ամիսէն պատերազմը պիտի վերջանայ:

-Այս հանգրուանի «ռաունտ»էն ետք Լիբանանը շա՛տ լաւ պիտի ըլլայ...:

Նման խօսքեր յաճախ լսեցինք եւ ամէն «ռաունտ»է ետք հազիւ թէ հրթիռները լոցին, ողջագուրուեցանք, զիրար շնորհատրեցինք, խաղաղութիւն մաղթեցինք եւ լծուեցանք աշխատանքի: Դուռ պատուհան նորոգեցինք, փլած պատերը հիւսեցինք ու ծեփեցինք: Հագուեցանք- շտկուեցանք ու մեր կենսուրախ բնաւորութեամբ կազմակերպեցինք՝ այսօր թատրոն, վաղը համերգ, Շաբաթ զիշեր պարահանդէս, նշանտուք, հարասնիք, մկրտութիւն, ձեռնարկներ, հաւաքներ...:

Ոմանք կըսեն թէ Լիբանանի պատերազմը աւարտեցաւ 1990- ին: Ես որպէս ականատես բոլոր հանգրուաններուն, հաստատօրէն կըսեմ ՈՉ. Լիբանանի պատերազմը չդադրեցաւ եւ մինչեւ օրս կը շարունակուի: Լիբանանի անմեղ քաղաքացիները յիսուն տարիներէ



կենթարկուին ահռելի դժուար պայմաններու՝ ապահովական, քաղաքական, տնտեսական, ընկերային, հոգեբանական...մինչ աշխարհը լուռ նստած կը դիտէ, իսկ «ուժեղները» իրենց պատերազմը կը մղեն Լիբանանի հողին վրայ, ի գին անմեղ քաղաքացիներու արեան հեղումին ու Լիբանանի քանդումին:

Բարեբախտաբար, լիբանանցին կը զանազանուի իր իւրայատուկ խառնուածքով՝ չընկրկող կամքով, լաւատեսութեամբ, դժուարութիւններուն տոկալու եւ յաղթահարելու բացառիկ կարողութեամբ: Լիբանանցիք երկրի անձուկ պայմաններուն մէջ անգամ կը քաջալերեն արուեստն ու մշակոյթը եւ յատուկ յարգանք կը տաձեն արուեստասէր ու ստեղծագործ փաղանգին հանդէպ:

Շատեր կը զարմանան, տեսնելով լիբանանցիին կենսունակութիւնը, եռանդը եւ կառչածութիւնը իր ծննդավայրին:

Հաւատացէ՛ք, որ նոյն այս վճռակամութեամբ, ոգիով պիտի շարունակէ ու զոյատեւէ լիբանանցին, հաւատալով, որ իր սիրելի մայրիներու օրրանը անպայման պիտի վերագտնէ իրեն արժանի խաղաղութիւնը:

Որպէս բարեմաղթութիւն սիրելի ծննդավայրիս, փոխ կ'առնեմ Դանիէլ Վարուժանի «Անդաստան»էն հետեւեալ տողերը՝

«Արևելեան կողմն աշխարհի

Խաղաղութիւն թող ըլլայ...

Ո՛չ արիւններ, քրտինք հոսին

Լայն երակին մէջ ակօսին .

Ու երբ հնչէ կոչնակն ամէն գիւղակի՝

Օրհներգութիւն թող ըլլայ»:

(Պայքար 12-4-2025)

ԱՆՏԱՆՕԹՈՒՀԻՆ Ա.

(ԽՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ)

Սովորութիւն ըրած էր քալել, քալել բնութեան մէջ առանձին, մեն-մենակ, իր խոհերուն եւ խոկումներուն հետ, որոնք զինք կ'առնէին իրենց ոլորապտոյտ յորձանքին մէջ...Կը յիշէր հին օրերը, երբ կեանքը այնքան տարբեր էր, մարդկային շփումը, գլուխ-գլխի խօսիլը, մէկու մը ցաւն ու խինդը կիսելը անփոխարինելի հրապոյր մը ունէին: Այդ պահերը զինք

կ'ազատագրէին մենութեան զգացումէն, հոգին կարծես կը շատնար ուրիշին ուրախութիւնը կիսելով, նոյնիսկ՝ ցաւը: Իսկ հիմա, ամէն ինչ վիրթուալ էր, անշունչ, անխօս...: Պաստառին վրայ բառեր գրելով կարելի՞ էր իսկապէս հաղորդակցիլ մէկու մը հետ, զգալ սիրտէ սիրտ, հոգիէ հոգի ծիածանը, տեսնել մանաւանդ աչքերը, որոնք հոգիին հայելին ըլլալով՝ ճշմարտօրէն կ'արտացոլէին մէկու մը ներաշխարհը:

Կը նախընտրէր թափառիլ բնութեան մէջ, խօսիլ ծառ ու ծաղիկին հետ, երկնքի ամպերուն հետ, ունկն դնել թռչունի մը դայլայլին, տերեւներու սօսափին եւ իր մենութիւնը փարատել բնութեան շոյալած հրաշքները դիտելով, ամէն անգամ նոր բան մը յայտնաբերելով անոնց մէջ:

Մարդիկ ալ արդէն առաջուանը չէին, Աստուծոյ տրուած բարեւն անգամ պարտադիր գործողութիւն մըն էր, զուրկ ջերմութենէ եւ անկեղծութենէ: Եթէ բառ մը արտասանէին, թաքուն հաշիւ մը կար թաքնուած անոր ետին: Ինք որ սիրտը լայն կը բանար ամէնուն, խօսիլ ու զրուցել անմիջական անկեղծութեամբ, տակաւ սկսաւ լռակեաց դառնալ, կամ միայն խօսիլ յաւուր պատշաճի, սխալ չհասկցուելու համար...Անգամ մը իր անկեղծօրէն



արտայայտած մէկ ապրումը դարձաւ նոյնիսկ ծաղր ու ծանակի առարկայ: Տնցուեցաւ այդ չարամիտ արձագանգէն: «Դուն պէտք է բժիշկին դիմես, այդպիսի փորձառութիւնը բնական չէ երբեք...», թելադրեց մէկը, երբ ամբողջ եղածը սրտայորդ ծիծաղի մը պարագայական անզսպելիութեան կը վերաբերէր ընդամենը: Հասկցաւ որ շատ յաճախ մարդիկ սրտաբուխ խօսքիդ մէջ բան մը կը փնտռէին քեզ պարսաւելու համար: Սէ՛րն էր պակասած արդէօք, կարեկցա՞նքը, զիրար լսելու, զիրար հասկնալու ունակութի՞ւնը: Գուցէ եւ մարդկային Ես-ը իր կոտորշները ցցած, կ'ուզէր ինքզինք պարտադրել ամէնուր, կոխկռտելով այլոց Ես-երը...Ո՞վ գիտէ: Նկատեր էր նաեւ որ մարդիկ դիմակ կը կրէին շատ յաճախ...եւ նոյնիսկ բարի խօսքը շատ անգամ քծինք ու շողմանք էր կոծկելու բուն, իրական ապրումը...

Մարդախոյս չէր իր էութեամբ: Ընդհակառակն, մարդէ մարդ ըսուած անկեղծ խօսքը գաղտնի ճամբան ունէր դէպի խորխորատները ներաշխարհին: Ժպիտն անգամ, լուռ ու վճիտ հայեացքը ցոլքն էր հոգիին: Բայց այնքան հագուազիւտ էին այդ պահերը եւ այնքան փնտռուած այս մեքենայական աշխարհիս մէջ, ուր ամէն ինչ կարծես կաղապարուած էր: Իսկ ինք միշտ ալ կը փնտռէր ներքին մարդը, որ կարծես անէացած ըլլար ռոպոթացած աշխարհին մէջ: Ո՞վ դարք, ո՞վ բարք:

Հոգին դարձուց իր գրուցակիցը՝ մտերմիկ ու անդաւաճան: Իր խոհերուն, յոյզերուն ու յուշերուն, ապրումներուն ու գաղափարներուն տոպրակը կը բանար լոկ անոր առջեւ...Մէկիկ-մէկիկ կը հանէր այդ տոպրակ-գանձարանէն իր խոկումներուն գոհարը, կը հրամցընէր անոր դատին: Իսկ ան՝ հոգին, կը մաքրագտէր զանոնք, կը բիրեղացնէր անոնց պարունակը եւ՝ յոկուած տեսքով, յոկուած բառերով կը մատուցանէր իրեն: Եւ այդ գործողութիւնը ծիսակատարութեան պէս խորհրդաւոր էր: Ինք ալ չէր գիտէր որ իր հոգւոյն գաղտնարանը տիեզերք մըն էր, որուն կրնար դիմել ամէն պահ առանց վարանումի, առանց վերապահութեան...

Երբեմն կիսաքուն կամ կիսարթմնի վիճակով կը գրուցէր հոգիին հետ: Օ՛, այդ պահերուն, հոգին աւելի շուտ կ'արձագանգէր իրեն, կը կրկնապատկէր, կը բազմապատկէր իր խոհ-ապրումները, բառեր կը դնէր իր մտքին, խօսքեր ու տողեր կը յօրինէր: Եւ ինք՝ զարմացած ու սքանչացած, կ'ուզէր մտապահել զանոնք, որ յանկարծ անոնք չկորսուէին անյայտութեան անդունդին մէջ...

Բնութեան մէջ ալ, երբ կը քալէր անոր արահետներէն, հոգին իր ամենէն սերտ ընկերը կը դառնար, իրեն յուշելով անոր խորհուրդին ամենէն նրբին դրսեւորումները: Խոնարհ խոտէն մինչեւ երկնքի աստղերը իրեն կը բանային անբաւ տիեզերքին սքանչելիքները, որոնք անհատնում էին, անսպառ...

Երբեմն ալ, այդ նոյն հոգին կը փարատէր իր տրտմութիւնն ու թախիծը, երբ որեւէ հարցով մտատանջ ու խռովայոյզ կը դիմէր իրեն: Ան կը փարատէր իր ներաշխարհը պատած գորշ ամպերը եւ զայն կը բալասանէր ամպերէն վեր տարածուող երկնքի անհունով եւ արեւին շողերով...



Հոգին ամեն ինչ էր: Կը բաւէր մտերմանալ անոր հետ, ունկն դնել անոր մրմունջներուն, անոր փսփսուքներուն: Հոգին, կը մտածէր, Աստուծոյ կայծն էր, շատ հաւանաբար, մարդուն ներաշխարհին մէջ:

Իսկ մարդկային ժխորը կը սպաննէր հոգին, ամբոխը կ'օտարէր զինք իր հոգիէն: Այնտեղ աղմուկն ու աղաղակը կը թելադրէր իր օրէնքը, կը սպառնար իր ազատութեան, իր հոգիի կանչին ունկնդրութեան: Հարահրոց մըն էր, թոհուրոհ, ուր հոգին տեղ չունէր:

Հոգին կը սիրէր լռութիւնը, մենութիւնը, որպէսզի կարենար բացուիլ թերթ առ թերթ, մատուցել իր բոյրերն ու թոյրերը, իր ներհուն գաղտնիքները, որոնք անսահման էին ինչպէս տիեզերքը: Եւ ի՞նչ էր աղօթքը վերջ ի վերջոյ, եթէ ոչ՝ ամենէն սրտաբուխ ու անկեղծ գրոյցը մարդուն սեփական խորքային Ես-ին, կամ հոգիին հետ:

Տակաւ զգաց երանութիւնը այն անսահմանութեան կամ տիեզերքին, գոր ամեն մարդ կը կրէր իր խոր էութեան մէջ: Եւ ապրելու երջանկութիւնը գուցէ այդ էր: Գտնել ՀՈԳԻՆ եւ զրուցել անոր հետ ամենայն խորութեամբ, ամենայն մտերմութեամբ:

Յիշեց մեծ հայուհի, Չապել Եսայեանի տողերը. «Այն հազուադէպ մարդիկը, որ բացառապէս կ'ապրին իրենց հոգիով, անմիջապէս կը ճանչցուին իրենց գործերուն, զգացումներուն, շարժումներուն ինքնաբուխ, միամիտ եւ յստակ պարզութեամբը: Անոնց հոգին խրտչելով չէ ապաստանած իրենց էութեան մէկ անկիւնը, այլ մակերեսն է բարձրացած, կը շողշողայ իրենց դէմքին վրայ, կը ճառագայթէ իրենց անձէն դուրս, կ'երգէ ու կը ժպտի անիկա եւ մարդ անասունը կը բարձրացնէ իր բարձրագոյն ոլորտին...»:

ԱՊՐԻԼ ՀՈԳԻՆ ՀԵՏ.- Սա պիտի ըլլար իր սկզբունքը եւ սա էր իր վաղուց փնտռած խորքային ճշմարտութիւնը երջանկութեան առեղծուածին:

Հանդարտեցաւ պահիկ մը, եւ իրեն թուեցաւ թէ զեփիւտը իր մեղմ զգուանքով, ծաղիկները, ծառերն ու խոտը զեփիւտի շոյանքէն շորորալով կ'երգէին բերկրանքը ապրելու խոր խորհուրդին...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

26/3/2025

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ գին չունի: Եթէ փորձես գին դնել անոր, յայնժամ ծախու ապրանք կը դառնայ ան, սակարկելի եւ խոցելի, կը դադրի ճշմարտութիւն ըլլալէ: Նոյնն են արդարութիւնը, ազատութիւնը, որոնք դժբախտաբար դարձեր են վաճառելի ապրանք՝ ներկայ աշխարհի շուկաներուն մէջ:

.....

Հանդարտ խիղճը գերագոյն վարձատրութիւնն է մեր կատարած պարտաւորութիւններուն, սրտի եւ

հոգիի պարտքերուն մասնատրապէս, որոնք ինքնակամ կը թելադրուին նոյնինքն այդ Խիղճ կոչուած աներեւոյթ ներքին հրահանգիչին կողմէ...եւ վա՛յ քեզի եթէ չկատարես անոր



հրահանգները...Պատիժը կ'ըլլայ արեւոյտ խիղճը, որ քո՛ւն թէ արթո՛ւն քեզ կ'անհանգստացնէ, քեզ կը յանդիմանէ, քեզ կը պարսաւէ, յանցաւո՛ր ու մեղաւո՛ր կը զգացնէ: Խղճի այդ ԽԱՅԹԸ ամենէն ահեղ պատիժն է որ սահմանուած է Արարիչին կողմէ եւ որմէ խուսափում չկայ ուշ թէ կանուխ...

.....

Մեր առօրեայ կեանքին մէջ, որքա՛ն ցաւ կը պատճառէ մեզի, երբ սխալ հասկցուինք, երբ մարդիկ՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար, ուզելով կամ չուզելով՝ ճիշդ չհասկնան մեզ, եւ կը փորձենք բացատրել, հասկցնել...ցաւ ի սիրտ նկատելով որ հասկնալ չուզողը, ի՛նչ ալ ըսես, պիտի չհասկնայ քեզ...Սա ընկերային լուրջ խնդիր է, քանզի մարդկային փոխյարաբերութեանց հիմքը իրարհասկացողութիւնն է, որ շատ անգամ կը դառնայ մեծ բացական...եւ բուն պատճառը սին վէճերու եւ թշնամութեանց:

.....

Անկաշառ, անաչառ ու անկաշկանդ մտածել...սա չէ՞ ՄՏՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ...որ կրնայ պայմանաւորել մտքի թռիչքը դէպի մարդկային հոգւոյն եւ տիեզերքի անպարագիծ ԱՆՀՈՒՆՈՒԹԻՒՆԸ..

.....

Մեր մօտ, հայ կեանքին ներս, ՀԱՏՈՒԱԾԱՄՈՒԹԻՒՆԸ մեր տունը քանդած է եւ կը շարունակէ քանդել: Եթէ ոեւէ մէկը, ըլլայ ան մեծ գիտնական, գրող թէ գիտարար, արուեստագետ թէ գործարար, յարգանքի արժանի վաստակ ունի եւ միջակութեանց թագաւորութեան մէջ արժանաւոր գործ կատարած է, բարձունք մը նուաճած է, կ'անտեսուի ամբողջովին, եթէ չըլլայ կուսակցութեան մը, խմբակցութեան մը, հատուածի մը անդամը, մարդը: Միւս կողմէ, միջակութիւն մը բարձր պատիւի կ'արժանանայ, եթէ կուսակցութեան մը, հատուածի մը կը պատկանի: Այս տխուր երեւոյթը պատճառներէն մէկն է հայ կեանքի որակագրկման բոլոր բնագաւառներէն ներս:

.....

Միմիայն ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ է որ կ'ազատագրէ անհատը, հասարակութիւնը, ազգը...Իսկ մենք չենք ուզեր տեսնել ճշմարտութիւնը, ջայլամի պէս կ'ուզենք կոծկել զայն, ինքնախաբերութեամբ զբաղիլ...Չենք ուզեր դէմ առ դէմ գալ ճշմարտութեան, պատասխանատու զգալ անոր համար: Եւ դարէ դար կը կրկնենք նոյն սխալները նոյն ոլորապտոյտին մէջ, կը մնանք ինքնախաբերութեան նոյն ծուղակին մէջ, քանզի ոչ որ կ'ուզէ ընդունիլ դառն ճշմարտութիւնը, ոչ որ կ'ուզէ հաշուետու ըլլալ գործուած սխալներուն...Եւ պատրուակներ կը յօրինենք զանոնք չընդունելու, չբարձրաձայնելու համար...Այս չէ՞ արդեօք պատճառներէն ամենէն վճռորոշը մեր ներկայ հաւաքական սխալներուն եւս: ԱՓՍՈՍ:

.....



Ունանք տեսարար կը գանգատին, կը դժգոհին, հոգ չէ թէ՛ քարենպաստ ու քարեկեցիկ պայմաններու մէջ ըլլան, հոգ չէ թէ գրկուած չըլլան ԲՆՈՒԹԵԱՆ շնորհած բերք ու բարիքէն...Ուրիշներ կան, որոնք չունին այդ պայմանները, սակայն գիտեն՝ մէկ տերեւին մէջ անգամ զգալ ամբողջ ծառին փարթամութիւնը, մէկ ծառին մէջ զգալ համակ ԲՆՈՒԹԵԱՆ բարխաւուն շունչն ու տրոփը: Իրականութեան մէջ, մարդ էակը ի՛նք կը ստեղծէ իր ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆԸ...քիչին մէջ շատը տեսնելով, կամ՝ իր ԱՊԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆԸ...շատին մէջ քիչը միայն տեսնելով: ՄԱՐԴԸ ՊԻՏԻ ՌԻՆԵՆԱՅ ՀԱՐՈՒՍՏ ՀՈԳԻ, ԷԱՊԷՍ ԵՐՁԱՆԿ ԶԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ:

.....

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ երբեք պատրաստ չի հրամցուիր արծաթեայ սկուտեղի վրայ: Զայն պիտի նուաճել ամէն պահ, յաղթահարելով քեզ ստրկացնելու միտող մութ բնագոյներն ու կիրքերը, նեղ-անձնական նկատառումները, քենն ու ռիսկալուծութիւնը, նախանձն ու աստելութիւնը, արտաքին փայլով շաքարապատուած սուտն ու կեղծիքը եւ այսպէս շարունակ...: Ամբողջ կեանք մը տեւող եւ դադար չունեցող գործընթաց է այս ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ, որուն ամէն մէկ պահը ՅԱՂԹԱՆԱԿ մըն է, Միգիֆոսեան ժայռի բարձրացումը բարձունքն ի վեր, ուրկէ ան պիտի թաւալի վար, եւ կրկին ու կրկին բարձրացուի՝ աննկուն կամքով, անկոտորում ոգիով, քանզի այդ ժայռի ԲԱՐՁՐԱՅՈՒՄՆ է որ նպատակ կու տայ կեանքիդ, որքան ալ անհեթեթ հնչէ ա՛յս միտքը, հեւք կու տայ սրտիդ, կորով կու տայ բազկիդ եւ ազատութեան շունչն ու ճաշակը կը պարզելէ ամէն պահ:

.....

Ազգային ոգին անիմանալի ոյժ է...Երբեմն մեզի կը թուի թէ ան խոր նիւջի մէջ է, կա՛յ ու չկա՛յ մեր հոգիին ընդերքներուն մէջ թաքնուած, ծուարած եւ սակայն կայծ մը բաւ է որ անիկա յանկարծօրէն բռնկի, բոցավառի եւ սիրտէ-սիրտ տարածուի՛, շատնա՛յ բազմապատիկ...Եւ ամէն անգամ նման բռնկումը աւելի կը հզօրացնէ զայն, աւելի կը գեղեցկացնէ զայն, ատակ կը դարձնէ զայն հոգենուէր զոհողութեանց, սխրանքներու, նոյնիսկ հերոսութեանց...Ո՛վ կրնայ ճանչնալ խորհուրդը անոր:

.....

Ամէն անգամ որ մեր Մեծասքանչը հնչէ հայ մանուկներու եւ պատանիներու շրթունքներէն, հայ Ոգին է որ կը յաղթանակէ...Ամէն անգամ որ հայ բնիկ երգը, բառն ու բանը ծաղկին հասակ առնող սերունդին մօտ, հայ Ոգին է որ կը յաղթանակէ...Ամէն մէկ հայ ընտանիք, մանկան մը ճիչին հետ միատեղ, հայ Ոգիի յաղթանակ է...Ամէն մէկ ընդվզում օտար ու խորթ չարժէքներու դէմ յաղթանակն է հայ Ոգիի: Եւ այսպէս, մեր աննշան եւ փոքր թուացող, բայց խորքին մէջ խորիմաստ պզտիկ-պզտիկ արարքները՝ բարդ-բարդ իրար վրայ կուտակուելով, կը պանծացնեն, կը փառաւորեն, կը զօրացնեն ՀԱՅ ՈԳԻՆ, որ ԲԱՆԱԼԻՆ Է ԱԶԳԱՅԻՆ մեր ՅԱՐԱՏԵԻՄԱՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Մարդիկ կրնան առժամաբար միտքը բանտել,
Մանձել հոգին խուցի մը նեղ պատերուն մէջ,
Բայց ո՞վ կրնայ լոյսի ճախրանքը կասեցնել,
Կամ խափանել անոր ճաճանչը լուսեղէն:

.....

Ազատութի՛ւն, դուն կը շողաս արեւի պէս,
Անպերէն վեր, հորիզոնին դէմ լուսագեղ,
Եւ ո՞վ կրնայ ոգիդ, շունչդ արգելակել,
Խոչընդոտել ու խափանել լոյսդ հրեղէն:

Ժամանակն է զոր կը մսխենք ամէն ինչէն ալ աւելի,
Կարծելով թէ յաւիտեան է, չկայ աւարտ ու չկայ վերջ,
Մայրամուտին լոկ մենք կը զգանք արժէքն անգին ժամանակի,
Երբ ալ ուշ է, հորիզոնին վերջալոյսն է ծիրանագեղ:

.....

Թող միտքերդ հոսի՛ն, հոսի՛ն գետակին պէս անարգել,
Գտնեն ճամբան դէպի լոյսը ճշմարիտին, ո՛ր որ է,
Քար մի՛ նետեր անոնց հոսքին, թող ընթանան անխափան,
Անոնց ազատ հոսքն ու թռիչքն է մարդուն փառքը միշտ անհաս:

.....

Որքան ալ լոյսը երգեցի արեւավառ, արեւապաշտ,
Թախիծ մը լուռ յար հեծկլտաց տողերուս մէջ ծիրանափայլ,
Անդաւաճան սիրոյ մը պէս ինձ հետ մնաց տիւ ու գիշեր,
Բերկրանքիս մէջ շիթ մ'արցունքով, ուզեց սիրոս բալասանել:



.....

Ազատ մտքիս համար շատ թանկ վճարեցի կեանքիս մէջ,
Ամբոխը կոյր խարազանեց, մնացի ես անընկեր,
Խիղճս միայն ուրախացաւ, լռութեամբն իր վարձատրեց,
Այդպէս անցայ կեանքիս ուղին, հիմա արդէն շատ ուշ է:

.....

Լացն ու կոծը, ողբն ու կական ոչինչ արժեն մահէն ետքը,
Արտասուքդ խղճիդ խայթն է, ի գուր են քու արցունքները,
Թէ պիտ' յարգես, հիմա յարգէ երբ դեռ ողջ է մարդը, ի նքը,
Կոտրելէն ետք, աւա՛ղ, կը զգանք կոտորուածին բուն արժէքը:

.....

Այնքան շատ են ծախուողները
Դրամի, դիրքի ու պաշտօնի,
Մանր դրամ է ճշմարիտը
Նմաններու աղտոտ ձեռքին...

.....

Կեանքիս աշնան լոկ զգացի
Հըրաժեշտը որ պիտի գայ,
Ցաւս դարձաւ ներշնչման կայծ,
Գրիչս առի, պոէտ դարձայ...

.....

Խենթերն են սուրբ ու սրբազան,
Որոնք պահեն ազգ ու երկիր
Միրտովն իրենց ջահավառեալ,
Հոգիով մեծ արեւակիր...

.....

Ժամանակի ձեռքն անկաշառ
Գգուեց զիս իր իմաստութեամբ
Բայց բարձր զին պահանջեց ան
Բոյլ մը կայծին իմաստութեան...

.....

Բառը զգոյշ դուն գործածէ
Ան հրաշագործ, մեծ ոյժ մըն է



Որ կը շինէ կամ կը քանդէ
Սիրտ կու տայ կամ սիրտեր կ'այրէ:

.....

Լռութեան մէջ բիր ձայներ կան
Շշունջներ կան նուրբ ու յուշիկ,
Որ աղմուկին մէջ կորսուին,
Մեռնին յաւէտ ու աննկատ:

Երան Գույումճեան